ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին ռազմավարական ծրագրի
կատարման վերաբերյալ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 6

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 7

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 9

1) Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում և բարեփոխումներ 9
2) ՀՊԳ հեղինակության բարձրացում 15
3) ՀՊԳ պաշտպանների մասնագիտական որակների բարձրացում և շարունակական վերապատրաստման ապահովում 16
4) Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում 18
5) ՀՊԳ աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում 19

ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 26

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 27

1) Փաստաբաններ Ավետիք Իշխանյանին, Լուսինե Սահակյանին ու Արգիշտի Կիվիրյանին ազատությունից զրկելու վերաբերյալ միջադեպ.. 27
2) Փաստաբան Լիանա Բալյանի նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ միջադեպ 28
3) Փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ իրականացված քրեական հետապնդման վերաբերյալ 29
4) Փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ հարուցված քրեական գործի վերաբերյալ 32
5) Փաստաբան Արշավիր Խալափյանի նկատմամբ հարուցված քրեական գործի վերաբերյալ 35

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 37

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 39

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ 41

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 51

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ
ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ 55

1) Ակումբ 55
2) Մարզամշակութային ակումբ 55
3) Հանձնախմբեր, հանձնաժողովներ և աշխատանքային այլ խմբեր 56
4) Երիտասարդական խորհուրդ 58
5) Փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախումբ 58
6) Փաստաբանների ընդունելությունը պալատում 60

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 61

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ
ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 65

1) Մասնագիտական էթիկային առնչվող հարցերի հրապարակում 65
2) Հասարակության հետ կապերի ռազմավարության մշակում 66

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ 68

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ 77

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ 80

Հավելված թիվ 1՝ Փաստաբանների դեմ ներկայացրած բողոքների և կարգապահական վարույթների վիճակագրություն 84

Հավելված թիվ 2՝ Փաստաբանների պալատի նախագահի իրավական ակտերի վիճակագրություն 87

Հավելված թիվ 3՝ Փաստաբանների պալատի գործավարության վիճակագրություն 88
Հավելված թիվ 4՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի վիճակագրություն 89
Հավելված թիվ 5՝ ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի վարած քրեական գործերի վերաբերյալ վիճակագրական տվյալների համեմատական վերլուծություն 90
Հավելված թիվ 6՝ ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի վարած քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերի վերաբերյալ վիճակագրական տվյալների համեմատական վերլուծություն 94
Հավելված թիվ 7՝ Հանրային պաշտպանի գրասենյակ դիմած քաղաքացիներն՝ ըստ կատեգորիաների (վիճակագրական տվյալների համեմատական վերլուծություն) 97

* * *

ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետվության մեջ ներկայացված է 2015 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի խորհրդի 25.12.2014թ. թիվ 37/4-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Փաստաբանների պալատ**) 2015-2017 թվականների ռազմավարության ծրագրի կատարմանն ուղղված միջոցառումների համառոտ բովանդակությունը:

Փաստաբանների պալատի 2015-2017 թվականների ռազմավարության ծրագրով նախատեսված են 2015-2017 թվականների համար Փաստաբանների պալատի ռազմավարական հիմնական 12 ուղղություններ, որոնցով ներկայացված են այն նվազագույն անելիքները, որոնք Փաստաբանների պալատն իր առջև դրել է:

Սույն հաշվետվության մեջ Փաստաբանների պալատի 2015 թվականի ռազմավարական ծրագրի կատարողականը ներկայացված է ոլորտային սկզբունքով առանձնացված գլուխներով:

Սույն հաշվետվությունը հաստատվել է Փաստաբանների պալատի խորհրդի 2016 թվականի մարտի 4-ի թիվ 7/9-Լ որոշմամբ:

* * *

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

➢ ***Փաստաբանների պալատի աշխատակազմում կառավարման ժամանակակից համակարգերի ներդրում.***

➢ ***Փաստաբանների պալատի աշխատակազմում (այդ թվում՝ հանրային պաշտպանների համար) գործավարության և փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի ներդրում («Mulberry» կամ այլ ծրագիր):***

2015 թվականին Փաստաբանների պալատի նախագահի հրամանով նոր խմբագրությամբ է հաստատվել **Փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների (աշխատանքային գործառույթ) շրջանակը**, որով աշխատակազմի գործառույթները վերախմբագրվել և առավել հստակեցվել են ըստ գործունեության ոլորտների:

Փաստաբանների պալատի նախագահի 16.02.2015թ. թիվ 26-Լ հրամանով հաստատվել է նաև «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաթղթաշրջանառության և ներքին գործավարության կազմակերպման և իրականացման կարգը», որով Փաստաբանների պալատում ներդրվել է գործավարության նոր համակարգ:

Որպես տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանի հրամայական՝ Փաստաբանների պալատը 2015 թվականին նախաձեռնեց էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ծրագիրը:

Փաստաբանների պալատի աշխատակազմում ներդրվել է գործավարության և փաստաթղթաշրջանառության «Mulberry» միջազգային չափորոշիչներին համապատասխանող էլեկտրոնային կառավարման համակարգը, որը պարզեցնում է փաստաթղթերի հետ առօրյա աշխատանքը, դրանց շարժի վերահսկումն ու կատարումը: Համակարգի ներդրման կարևորագույն արդյունքներից մեկը աշխատակազմի կատարողական կարգապահության բարձրացումն է, քանի որ ավտոմատացված կերպով վերահսկվում են հանձնարարականների կատարման ժամկետը և գործընթացը:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- ***Փաստաբանների պալատի (այդ թվում՝ ՀՊԳ) նյութատեխնիկական բազայի արդիականացում.***
- ***Ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկության ապահովում և հաշվետվողականություն:***

Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության առավել արդյունավետ կազմակերպման համար, որպես Փաստաբանների պալատի կառուցվածքային ստորաբաժանում առանձնացվել է ֆինանսական ծառայությունը, իսկ Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործառնությունների իրականացման կարգով սահմանվել են Փաստաբանների պալատի տարեկան բյուջեի նախագծի կազմման, կատարման, ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (գնման), պահեստավորման, բաշխման, դրամարկղային և բանկային գործառնությունների, ինչպես նաև այլ ֆինանսատնտեսական միջոցառումների կազմակերպման և իրականացման ընթացակարգերը:

Փաստաբանների պալատի ֆինանսական գործունեության ոլորտում ներդրված կարևորագույն նորամուծություններից մեկը դրամարկղային գործառնությունների ստուգման ակտի ներդրումն է, որը հնարավորություն է տալիս ամփոփ և պատկերավոր ձևով տեսնելու Փաստաբանների պալատի դրամարկղի շարժը: Դրամարկղային գործառնությունների ստուգման ակտը հնարավորություն է տալիս նաև վերահսկելու դրամարկղի շարժը՝ հաշվի առնելով նաև այն, որ Փաստաբանների պալատում դրամարկղային գործառնությունն իրականացվում է թղթային եղանակով:

Նշված կարգով հստակ չափանիշներ են նախատեսվել նաև Փաստաբանների պալատի տարեկան բյուջեի կազմման համար: Ըստ գործող կարգի՝ Փաստաբանների պալատի տարեկան բյուջեն կազմվում է հաշվի առնելով՝ տվյալ տարվա ընթացքում փաստացի ստացված մուտքերը և աճման (նվազեցման) դինամիկան, տվյալ տարվա ընթացքում փաստացի կատարված ծախսերը և ծախսերի աճման (նվազեցման) դինամիկան, Փաստաբանների պալատի կողմից առաջիկա տարվա համար կատարվող ծրագրերը, Փաստաբանների պալատի՝ օրենքով և կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրագործման համար անհրաժեշտ ծախսերը, աշխատակազմի համալրման կամ նվազեցման անհրաժեշտությունը, անդամավճարների հավաքագրման ժամանակ առաջացած խնդիրները, նյութատեխնիկական համալրման անհրաժեշտությունը, տվյալ ժամանակահատվածում գործող

ապրանքների և ծառայությունների գները և դրանց փոփոխման դինամիկան, ինչպես նաև այլ գործոններ:

Սահմանվել են նաև բյուջեի կառուցվածը, ըստ որի՝ բյուջեն պետք է պարունակի ֆինանսական տարվա համախմբված բյուջեի կազմը (եկամուտներ (մուտքեր), ծախսեր, պրոֆիցիտ (հավելուրդ) և/կամ դեֆիցիտ), ֆինանսական տարվա բյուջեի եկամուտներն ըստ հոդվածների և բյուջեի ծախսերն ըստ հոդվածների:

Նշված կարգով սահմանված չափանիշներն արդեն գործնականում կիրառվել են 2015 թվականի դեկտեմբերին՝ Փաստաբանների պալատի 2016 թվականի բյուջեի կազմման գործընթացում:

Նոր մեխանիզմներ են ներդրվել նաև Փաստաբանների պալատի ապրանքների գնման գործընթացում:

Գնում կատարելու համար մշակվել են ապրանքի ձեռքբերման հայտեր, որոնց միջոցով ստուգվում է հայցվող ապրանքների և/կամ ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությունը և հիմնավորվածությունը:

Փաստաբանների պալատի և/կամ հանրային պաշտպանի գրասենյակի կարիքների համար երեսուն հազար ՀՀ դրամ գումարը գերազանցող ցանկացած գնում կատարելիս՝ ապրանքի ձեռքբերման հայտի հիմքում պետք է դրվեն համապատասխան ապրանքի (ծառայության) գնի և/կամ տեխնիկական նկարագրի վերաբերյալ առնվազն երկու կազմակերպություններից (մատակարարից կամ ծառայություն մատուցողից) ստացված գնային առաջարկներ, բացառությամբ գործարքն անհապաղ կատարելու կամ կարգով նախատեսված այլ դեպքերի:

Փաստաբանների պալատի ընթացիկ ծախսերը կատարելիս բյուջեով նախատեսված համամասնությունը պահպանելու (բյուջեով նախատեսված հոդվածով սահմանված գումարի չափը չգերազանցելու) համար ծախսերն իրականացվում են եռամսյակային կարգով ծախսերի հաշվարկման և պլանավորման սկզբունքով:

Փաստաբանների պալատի կայքում առկա «Հաշվետվություններ» բաժնում (որը տեսանելի է միայն փաստաբանների համար) եռամսյակային կարգով տեղադրվում են Փաստաբանների պալատի ֆինանսական հաշվետվությունները, իսկ այնուհետև տարեկան ամփոփվում և տեղադրվում է տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվությունները տեղադրվում են Փաստաբանների պալատի բյուջեի հետ համեմատական վերլուծությամբ, որպեսզի փաստաբանները կարողանան տեսնել նաև բյուջեի կատարողականը և հնարավոր շեղումները:

* * *

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1. Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում և բարեփոխումներ.

➢ ***Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի (այսուհետ նաև ՀՊԳ) հանրային պաշտպանների թվաքանակի ավելացման քաղաքականության վարում.***

Հանրային պաշտպանության ոլորտում Փաստաբանների պալատի կողմից մշտապես բարձրացվող խնդիրներից է հանրային պաշտպանի թվականի հարցը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված անվճար իրավաբանական օգնություն հայցելու իրավունք ունեցող անձանց շրջանակի և հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող քրեական և քաղաքացիական (այդ թվում՝ վարչական և սահմանադրական) գործերի վիճակագրության [1] ուսումնասիրությունը վկայում է հանրային պաշտպանների քիչ թվաքանակի մասին:

Հանրային պաշտպանի գրասենյակում գործող հանրային պաշտպանների հաստիքների ընդհանուր քանակը որոշվում է համապատասխան բյուջետային օրենքով տվյալ տարվա համար հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացվող գումարի չափից:

2012 թվականից սկսած հանրային պաշտպանի գրասենյակում գործում էր 49 հանրային պաշտպան ի հաստիք, որի պարագայում միջին հաշվարկով քրեական գործերով հանրային պաշտպանին մեկ տարված ընթացքում բաժին էր ընկնում 95 գործ, իսկ քաղաքացիական ուղղվածության հանրային պաշտպանին՝ 220 գործ:

2015 թվականին Փաստաբանների պալատի առաջարկությունն ե ր ի և հիմնավորումների հաշվառմամբ հնարավոր եղավ հանրային պաշտպանների հաստիքների քանակն ավելացնել 5 հաստիքով, որոնք համապատասխանաբար բաշխվել են հանրային պաշտպանի գրասենյակի Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում գործունեություն իրականացնելու համար:

[1] ՀՊԳ վիճակագրությունը տես սույն հաշվետվության թիվ 5-7 հավելվածներում:

➢ ***ՀՊԳ պաշտպան դառնալու ընթացակարգի թափանցիկության բարձրացում և մրցակցության եղանակների կատարելագործում.***

2013 թվականի հոկտեմբերից սկսած հանրային պաշտպանների հաստիքների համալրումն իրականացվում է մրցութային կարգով[2]:

Փաստաբանների պալատի կողմից հաստիքների համալրման մրցութային քաղաքականության որդեգրումը նպատակ է հետապնդում, նախ և առաջ, ապահովել հանրային պաշտպան դառնալու գործընթացի թափանցիկությունը և օբյեկտիվ գնահատել հանրային պաշտպանի թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը:

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթն իրականացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր (հարցազրույց): Մրցույթի կազմակերպման և թեկնածուների աշխատանքների գնահատման համար յուրաքանչյուր տարի ստեղծվում է համապատասխան մրցութային հանձնաժողով, որն անցկացնում է մրցույթի ողջ ընթացքը և գնահատում է քննական առաջադրանքները:

Մրցույթի առաջադրանքը ընտրվում է թեկնածուների կողմից վիճակահանության միջոցով, իսկ առաջադրանքների գնահատման համար մշակված է այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տալիս գնահատման գործընթացում բացառել սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:

Մրցույթի գրավոր փուլի ընթացքն՝ ըստ կարգի, իրականացվում է աշխատանքի ստուգման գործընթացում թեկնածուի անձի բացահայտումը (աշխատանքի հեղինակի նույնականացումը) բացառող կարգով: Մրցույթի մասնակիցն իր աշխատանքը տպագրում է երկու օրինակից, որոնց վրա փակցնում է այդ պահին պատահականությամբ արկղից վերցված ծածկագրերը (շտրիխ կոդ): Մրցույթի մասնակիցն իր աշխատանքի տպագրված օրինակներից մեկի վրա ստորագրում է ու անձամբ տեղադրում է կնքված արկղի մեջ, իսկ մյուս օրինակը, որի վրա առկա է միայն ծածկագիր (շտրիխ կոդը) հանձնվում է մրցութային հանձնաժողովին: Գրավոր աշխատանքի ստուգման գործընթացում մրցութային հանձնաժողովի տիրապետության տակ եղած միայն ծածկագրով գրավոր աշխատանքը հնարավորություն չի տալիս իմանալու, թե այդ պահին հավակնորդների ում աշխատանքն է ստուգվում:

Ծածկագրերով գնահատականները հրապարակելուց հետո, յուրաքանչյուր

[2] Հանրային պաշտպանի թափուր հաստիքն արտամրցութային կարգով համալրվում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաստիքը մրցութային կարգով անցած թեկնածուներով համալրել հնարավոր չէ, օրինակ՝ երբ ՀՊԳ մարզային գրասենյակում առկա թափուր հաստիքի համալրման համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար որևէ թեկնածու չի դիմել:

թեկնածու իր ծածկագրի և միավորի մասին տեղեկանում է կնքված արկղը բացելուց հետո:

2015 թվականի դեկտեմբեր ամսին հայտարարված մրցույթի գրավոր փուլին մասնակցել են **57 փաստաբան** (33 փաստաբան քրեական ուղղվածությամբ և 24 փաստաբան քաղաքացիական և վարչական ուղղվածությամբ): Մրցույթի գրավոր փուլը 57 մասնակիցներից հաղթահարել են 35 փաստաբան[3] :

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու մրցույթի վիճակագրության ուսումնասիրությունից նկատվում է հանրային պաշտպանի աշխատանքի նկատմամբ հետաքրքրություն:

Այսպես, 2014 թվականի նոյեմբերի հայտարարված մրցույթին մասնակցելու համար երկու ուղղվածությամբ (քրեական և քաղաքացիական ու վարչական) համապատասխան դիմումներ էին ներկայացրել 29 փաստաբան (14 տղամարդ և 11 կին), որից մրցույթին փաստացի ներկայացել են 25 փաստաբան: 2015 թվականի դեկտեմբերին հայտարարված մրցույթին մասնակցելու համար երկու ուղղվածությամբ (քրեական և քաղաքացիական ու վարչական) համապատասխան դիմումներ էին ներկայացրել 64 փաստաբան (38 տղամարդ և 26 կին), որից մրցույթին փաստացի ներկայացել են 57 փաստաբան:

Նշված տվյալների համեմատական վերլուծությունից բխում է, որ մեկ տարվա ընթացքում հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու **մրցույթի մասնակիցների թիվը աճել է 35 անձով կամ 121 տոկոսով**:

2015 թվականին մրցույթի հաղթող ճանաչված թ եկնածուներից 27 փաստաբան (հաշվի առնելով յուրաքանչյուրի մրցութային միավորի վարկանիշը) 2016 թվականի հունվարի 1 -ից նշանակվել են հանրային պաշտպանի աշխատանքի՝ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում:

- ***ՀՊԳ պաշտպանների խրախուսման եղանակների ներդրում.***

2015 թվականի հունիսի 1-ից որպես հանրային պաշտպանների խրախուսման միջոց, Փաստաբանների պալատի կողմից հանրային պաշտպաններից յուրաքանչյուրին տրամադրվել են մինչև 3.000.000 ՀՀ դրամ գումարի չափով առողջության ապահովագրության փաթեթներ, որի շրջանակում հանրային պաշտպանը կարող է մեկ տարվա ընթացում անվճար օգտվել բժշկական ծառայությունների լայն շրջանակից:

Փաստաբանների պալատի կողմից ներդրվել է նաև հանրային պաշտպանի

[3] այդ թվում՝ 9 փաստաբանները, որոնք գրավոր փուլը հաղթահարած են համարվել Փաստաբանների պալատի խորհրդի կողմից բողոքների քննության արդյունքում միավորի բարձրացման հիմքով:

մասնագիտական պատրաստվածության և արդյունավետության գնահատման համակարգ:

Փաստաբանների պալատի նախագահի 30.10.2015թ. թիվ 336-Լ որոշմամբ հաստատվել է **«Հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման» հրահանգը**, որը սահմանում է հանրային պաշտպանի գրասենյակում առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչները և գնահատման ընթացակարգը:

Նշված հրահանգի համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում գործող հանրային պաշտպաններից յուրաքանչյուրի աշխատանքն՝ ըստ հրահանգով սահմանված միավորների, գնահատման հանձնաժողովի կողմից գնահատվում է ***ընդհանուր չափորոշիչներով***, որոնց շրջանակներում հաշվի են առնվում հանրային պաշտպանի կողմից օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին մասնակցած լինելը, «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ **Փաստաբանի վարքագծի կանոնագրքի** պահանջների խախտման համար կարգապահական տույժի ենթարկված չլինելը, աշխատանքային կարգապահության խախտման համար տույժի ենթարկված չլինելը, **հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով** փաստաբանական վարույթին վերաբերվող պահանջները կատարած լինելը:

Հրահանգով հանրային պաշտպանի աշխատանքը գնահատվում է նաև ***ըստ հանրային պաշտպանի մասնագիտական ուղղվածության (քրեական ու քաղաքացիական և վարչական) չափորոշիչների:***

Հրահանգի համաձայն՝ ***քրեական ուղղվածության*** հանրային պաշտպանների աշխատանքը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի արդարացումների (լրիվ կամ մասնակի), ինչպես նաև արդարացնող և ոչ արդարացնող հիմքով վարույթը կարճված գործերի թիվը, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերը, ավելի մեղմ հոդվածով կամ հոդվածի մասով վերավորակումները, տուգանքի նշանակումները, սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժի նշանակումները, անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակումները, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, ինչպես նաև մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ

մասնակի բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, որպես կալանավորման այլընտրանքային միջոց դատարանի կողմից գրավ ընտրելը, որպես խափանման միջոց ընտրված կալանքը մեկ այլ խափանման միջոցով փոխարինվելը և այլ չափորոշիչներ:

Քաղաքացիական և վարչական ուղղվածության հանրային պաշտպանների գործունեությունը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի վարչական մարմին կամ դրա վերադաս մարմնին ուղղված դիմումների, բողոքների, կատարված հարցումների թիվը, վարչական մարմնի կամ դրա վերադասի կողմից բավարարված վարչական բողոքների թիվը, կազմված հայցադիմումների, դիմումների թիվը, հօգուտ վստահորդի կայացված վերջնական դատական ակտերը, միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը և այլ չափորոշիչներ:

2015 թվականի նոյեմբերին հրահանգի համաձայն իրականացված հանրային պաշտպանների մասնագիտական պատրաստվածության գնահատման ընթացքում Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում հանրային պաշտպանի 49 հաստիքով (այդ թվում՝ 0,5 դրույքով) գործունեություն իրականացնող 53 հանրային պաշտպաններից 38 հանրային պաշտպանի[4] հետ աշխատանքային պայմանագրերը հրահանգին համապատասխան երկարաձգվել են ևս մեկ տարով: Նշված ցուցանիշը տոկոսային արտահայտմամբ դիտարկելիս՝ ստացվում է, որ գործող հանրային պաշտպանների մոտ 70%-ը հրահանգին համապատասխան գնահատվել են անցողիկ միավորով, ինչի արդյունքում ևս մեկ տարի շարունակել են իրենց աշխատանքը հանրային պաշտպանի գրասենյակում:

- ***հանրային պաշտպանների ռոտացիոն համակարգի ներդնում՝ հաստիքների որոշակի տոկոսը սկսնակ փաստաբաններով համալրելու նպատակով.***

Հրահանգով հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության ստուգումը հանգեցնում է նաև գործող հանրային պաշտպանների վարկանիշային կարգով ռոտացիայի, որի արդյունքում Հրահանգով գնահատման, ինչպես նաև մրցույթի արդյունքում անցողիկ միավոր չհավաքելու հետևանքով գործող հանրային պաշտպանն իր տեղը զիջում է

[4] նշված թվի մեջ ներառված են նաև ՀՊԳ Երևանի գրասենյակում աշխատող երեք հանրային պաշտպանները, որոնք երեք ամսից պակաս են աշխատել ՀՊԳ-ում և հրահանգի 13-րդ կետի համաձայն համարվել են մեխանիկորեն անցողիկ միավոր ստացած:

մրցույթով հաղթող ճանաչված նոր հանրային պաշտպանին:

Հանրային պաշտպանի գրասենյակում ռոտացիան հնարավորություն է տալիս հանրային պաշտպանների հաստիքները համալրել երիտասարդ փաստաբաններով:

Ներկայումս գործող 54 հանրային պաշտպանի հաստիքով աշխատող 66 հանրային պաշտպաններից 21-ը (գործող հանրային պաշտպանների մոտ 32%-ը) համալրվել են երիտասարդ[5] փաստաբաններով:

➢ ***անվճար իրավական օգնության տրամադրման ծառայության որակի բարձրացում և ընթացակարգերի նկատմամբ վերահսկողության կառուցակարգերի մշակում և ներդրում.***

Հանրային պաշտպանի գրասենյակում գործում է մոնիթորինգի բաժին՝ երկու մոնիթորինգի պատասխանատուների հաստիքներով:

Մոնիթորինգի բաժնի ստեղծումը պայմանավորված է եղել հանրային պաշտպանների կողմից փաստաբանական վարույթները հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով սահմանված չափանիշներով վարելու նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև հանրային պաշտպանների կողմից տրամադրվող իրավաբանական օգնության որակի գնահատման նպատակով:

Փաստաբանների պալատի նախագահի 08.09.2015թ. թիվ 163-Լ հրամանով նոր խմբագրությամբ հաստատված **Փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների (աշխատանքային գործառույթ) շրջանակի** համաձայն՝ մոնիթորինգի պատասխանատուն ուսումնասիրում է հանրային պաշտպանների վարույթները և տալիս է եզրակացություն, ՀՊԳ ղեկավարի առաջարկությամբ կամ Փաստաբանների պալատի նախագահի հանձնարարությամբ ստուգում է հանրային պաշտպանների կողմից քննչական կամ դատավարական այլ գործողություններին մասնակցելու փաստերը, դիտորդի կարգով մասնակցում է հանրային պաշտպանների մասնակցությամբ դատական նիստերին, պարբերաբար այցելում է հանրային պաշտպանների մարզային գրասենյակներ, հարցումներ է անցկացնում հանրային պաշտպանների իրավաբանական օգնությունից օգտվող անձանց կամ նրանց ազգականների շրջանում, կազմում և Փաստաբանների պալատի նախագահին է ներկայացնում հանրային պաշտպանների աշխատանքի գնահատականներն՝ ըստ կատարված աշխատանքի ծավալների և արդյունքների, իրականացնում է մի շարք այլ գործառույթներ:

[5] Մինչև երեք տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբաններ:

2015 թվականի ընթացքում մոնիթորինգի պատասխանատուների կողմից ստուգվել են 49 հանրային պաշտպանների շուրջ 460 փաստաբանական վարույթներ, որոնց վերաբերյալ տրված եզրակացությունների հիման վրա 9 հանրային պաշտպանների նկատմամբ հարուցվել են աշխատանքային կարգապահական վարույթներ, որոնք հետագայում կարճվել են այն հիմքով, որ հանրային պաշտպանները սահմանված ժամկետում վերացրել են ստուգման արդյունքում հայտնաբերված թերությունները: Մնացած հանրային պաշտպաններին այդ մասով ներկայացվել են առաջարկություններ կամ դիտողություններ:

2. *ՀՊԳ հեղինակության բարձրացում.*

➢ ***ՀՊԳ գործունեության լայն լուսաբանում, այդ թվում՝ հանրային պաշտպանների վարած գործերի և արձանագրված արդյունքների (արդարացումներ և այլ հաջողություններ) վիճակագրության հրապարակում.***

2015 թվականին իրա կանացվել են նաև զանգվածային լրատվության տարբեր միջոցներով հանրային պաշտպանների գործունեության լուսաբանմանն ուղղված միջոցառումներ:

Հանրային պաշտպանները մասնակցել են «Կենտրոն» հեռուստաընկերության եթերով հեռարձակվող «Քո սխալը» հաղորդաշարին, պարզաբանել են տարբեր հարցեր կապված ամուսնալուծության ու ժառանգության իրավահարաբերությունների հետ:

Քաղաքացիական և վարչական ուղղվածությամբ հանրային պաշտպանները «Արմենիա» հեռուստաընկերության «Բարի լույս» ծրագրի շուրջ **15 եթերներով** իրավաբանական տարբեր հարցերի վերաբերյալ տվել են մեկնաբանություններ և ներկայացրել են քննարկվող հարցերի վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները:

ՀՊԳ ղեկավարը հարցազրույցներ է տվել մի շարք հեռուստաընկերություններին, պարզաբանել է ՀՊԳ դիմելու կարգը, ներկայացրել է անվճար իրավական օգնություն ստանալու իրավունք ունեցող անցած՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված շրջանակը, ինչպես նաև խոսել է ՀՊԳ աշխատանքների մասին:

«Արմենիա» հեռուստաընկերության «Սուր անկյուն» հաղորդաշարի տարբեր թողարկումների ընթացքում հանրային պաշտպանները խոսել են տարբեր թեմաների շուրջ, մասնավորապես՝ առևանգման, դատական սխալների, փորձագիտական եզրակացության վիճելիության, մարմնական վնասվածքների

վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների և այլ թեմաների մասին, հարցազրույցներ են տվել ավելի քան **25 հաղորդման** ընթացքում:

Որոշ հանրային պաշտպաններ մասնակցել են նաև «Հանրային» և «Ար» հեռուստաընկերությունների տարբեր լրատվական ծրագրերի:

«Առավոտ» օրաթերթի իրավական բաժնում լույս է տեսել նաև մի շարք հանրային պաշտպանների կողմից տարբեր գործերով արձանագրված հաջողությունների մասին հոդվածներ:

3. ***ՀՊԳ պաշտպանների մասնագիտական որակների բարձրացում և շարունակական վերապատրաստման ապահովում.***

- ***Հանրային պաշտպանների պարտադիր վերապատրաստման ծրագրերի մշակում՝ ըստ իրավունքի ճյուղերի (այդ թվում՝ հանրային պաշտպանների նեղ մասնագիտացման) և առավել հաճախ հանդիպող իրավական հարցերի.***
- ***օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ վերապատրաստման դասընթացների անցկացում.***
- ***Հանրային բնույթի միջոցառումների անցկացում, փորձի փոխանակման կարգով լայն կամ նեղ հարցերի վերաբերյալ միջազգային կառույցների հետ հարաբերությունների հաստատում և դրամաշնորհային ծրագրերի նախագծում և իրականացում.***

Փաստաբանների պալատը «Հանրային պաշտպանի գրասենյակի օժանդակություն» ծրագրի շրջանակներում արդեն տևական համագործակցություն ունի Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության հետ:

Նշված ծրագրի շրջանակներում 2015 թվականի ապրիլից սկսած Հայաստանի Հանրապետության հինգ մարզերում (Շիրակ, Կոտայք, Արագածոտն, Սյունիք և Տավուշ) տեղի հանրային պաշտպանների մասնագիտական որակի բարձրացման նպատակով Երևան քաղաքից կոնկրետ ոլորտում փորձառություն ունեցող փաստաբանները համագործակցում են հանրային պաշտպանների հետ: Ծրագիրը ներդրվել է մարզային հանրային պաշտպանների մասնագիտական որակների բարձրացման նպատակով՝ հաշվի առնելով նաև այն, որ հեռավոր մարզերում, որտեղ հաճախ գործում է մեկ

փաստաբան, հնարավորություն չի լինում հատկապես բարդ և խնդրահարույց գործերով մասնագիտական քննարկում կազմակերպել, իսկ այլ գործընկերոջ հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս գործը քննարկել բազմակողմանիորեն:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ հանրային պաշտպանի օգնականի կարգավիճակով հնարավորություն են ստանում վճարովի հիմունքներով (վարձատրվում է ուսանողը) վեց ամիս ժամանակահատվածով մասնագիտական պրակտիկա անցնել հանրային պաշտպանի գրասենյակում՝ օգնելով հանրային պաշտպաններին: 2015 թվականի ընթացքում նշված նախաձեռնության շրջանակներում ուսանողների պրակտիկա է կազմակերպվել հանրային պաշտպանի գրասենյակի Լոռու մարզի Վանաձոր քաղաքի նստավայրում, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի նստավայրում, Սյունիքի մարզի Կապան քաղաքի նստավայրում և Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի նստավայրում:

Մարզային հանրային պաշտպանների մասնագիտական որակների բարձրացման, ինչպես նաև պարտադիր վերապատրաստման դասընթացներին մասնակցությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության կողմից մեկ այլ նախաձեռնության շրջանակներում հանրային պաշտպանների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ մեկ դասընթաց Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում և երկու դասընթաց Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության կողմից ներդրվել է նաև հանրային պաշտպանների առցանց վերապատրաստման համակարգը, որի շրջանակներում հանրային պաշտպանների համար կազմակերպվել են մի շարք վերապատրաստման դասընթացներ քրեական իրավունքի և քրեական դատավարության տարբեր թեմաների, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ:

Հանրային պաշտպանների գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը, ինչպես նաև աշխատանքի կազմակերպման որակը բարձրացնելու նպատակով Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության օժանդակությամբ 2015 թվականի ընթացքում մշակվել և հանրային պաշտպանի գրասենյակում ներդրվել է **«Էլեկտրոնային հանրային պաշտպանի գրասենյակի տեղեկատվական**

համակարգի» առաջին փուլը, որ ի արդյունքում արդեն հանրային պաշտպանի գրասենյակում գործերի մակագրությունն իրականացվում է էլեկտրոնային կարգով և հնարավորություն է տալիս վարելու հաճախորդների տվյալների շտեմարաններ, ինչպես նաև վարել ՀՊԳ արխիվն էլեկտրոնային կարգով:

4. *Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում.*

➢ ***ՀՊԳ գործունեությանն օժանդակելու և հանրությանն անվճար իրավական օգնություն (խորհրդատվություն) տրամադրելու նպատակով անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելու պատրաստակամություն ունեցող փաստաբանների ցանցի ստեղծում, pro bono մշակույթի ժողովրդականացում, այդ մշակույթի ամրապնդմանն ուղղված միջոցառումների, խրախուսման եղանակների փնտրում (հարկային բեռի նվազեցում տրամադրված անվճար իրավաբանական օգնությանը համաչափ և այլն):***

Հաշվի առնելով հատկապես քաղաքացիական գործերով բնակչության անվճար իրավական օգնության պահանջարկը, Փաստաբանների պալատը Փաստաբանական դպրոցի հետ համատեղ իրականացնում է նաև քաղաքացիներին անվճար իրավական խորհրդատվության տրամադրման նախաձեռնություն:

Ավելի քան երկու տարի է, որ Փաստաբանների պալատում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը հայտարարվել է անվճար խորհրդատվության տրամադրման օր:

2015 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի ջանքերով Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության որոշ մարզերում անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել **2158 քաղաքացու**:

Միաժամանակ, ըստ անհրաժեշտության Փաստաբանների պալատը կազմակերպել է կամավոր փաստաբանների ցանկի հրապարակում՝ հանրային միջոցառման ժամանակ անվճար իրավաբանական օգնություն ստանալու անհրաժեշտություն ունեցող քաղաքացիներին օգնելու համար (այդ մասին լրացուցիչ նշված է սույն հաշվետվությունում):

5. ***ՀՊԳ-ի աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում***

➢ ***ՀՊԳ-ի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների տրամադրում և կայքէջում դրանց տեղադրում.***

Փաստաբանների պալատի կայքէջում ստեղծվել է **«ՀՊԳ հաշվետվություններ»** էջը, որում եռամսյակային և տարեկան կտրվածքով հրապարակվում են ՀՊԳ կողմից վարած քրեական, ինչպես նաև քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունները:

2015 թվականի ընթացքում ՀՊԳ կողմից վարած գործերի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունները տես սույն հաշվետվության 5-7 հավելվածներում:

* * *

ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* * *

➢ ***Փաստաբանական դպրոցում ուսուցումն իրականացվում է ըստ մասնագիտական ուղղվածության.***

2014 թվականի աշնանային հոսքի ընդունելությ ունից սկսած Փաստաբանական դպրոցում ուսուցումը կազմակերպվում է ըստ ***քրեաիրավական*** և ***քաղաքացիաիրավական մասնագիտական ուղղվածությունների***, ինչի արդյունքում համապատասխան մասնագիտացում ընտրած ունկնդիրները ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մոտ 90% հարաբերակցությամբ անցնում են նեղ մասնագիտական առարկաներ, օրինակ՝ քրեական ուղղվածության ունկնդիրները քրեաիրավական մասնագիտացման առարկաներ, իսկ մնացած առարկաները հարակից են և կրում են ընդհանուր բնույթ՝ անկախ ունկնդրի մասնագիտացումից, օրինակ՝ փաստաբանի վարքագծի, հոգեբանության հիմունքների, սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների հետ կապված առարկաները:

2015 թվականի ընթացքում (գարնանային և աշնանային հոսքերով) Փաստաբանական դպրոցում ուսուցում է անցել, ընդհանուր առմամբ **158 ունկնդիր**, որից 49 քրեաիրավական ուղղվածությամբ, իսկ 109՝ քաղաքացիաիրավական ուղղվածությամբ:

2015 թվականի գարնանային և աշնանային հոսքերում մասնագիտացված ուսումնական պլաններով ուսուցում անցած ընդհանուր 158 ունկնդրից 20-ը ուսուցում են անցել հեռավար կարգով:

* * *

➢ ***Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման քննությունները.***

Փաստաբանական դպրոցի ունկնդիրների (շրջանավարտների) որակավորման քննություններն անցկացնում է Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

Գործող կարգի համաձայն՝ Փաստաբանական դպրոցի ունկնդիրն ավարտելով ուսուցումը դպրոցում որակավորման քննությանը մասնակցելու

համար ժամանակացույցում նշված ժամկետում Փաստաբանների պալատին է հանձնում որակավորման հանձնաժողովի կողմից սահմանված ձևի լրացրած և ստորագրած դիմումը:

Որակավորման քննությունն անցկացվում է համակարգչի միջոցով՝ գրավոր ընթացակարգով: Ունկնդիրը որակավորման քննությունը հանձնում է այն ուղղվածությամբ (քրեական կամ քաղաքացիական), որը նշել է Դպրոցի ընդունելության դիմումում:

Քրեական ուղղվածություն ընտրած ունկնդիրն առաջադրանք է կատարում՝

1) **քրեական մոդուլից՝** առաջին ատյանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելով,
2) **քրեական մոդուլից՝** միջանկյալ դատական կամ այլ ակտի դեմ բողոք կազմելով,
3) **դեոնթոլոգիայի մոդուլից՝** փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ խնդիրներ լուծելով:

Քաղաքացիական ուղղվածություն ընտրած ունկնդիրն առաջադրանք է կատարում՝

1) **քաղաքացիական մոդուլից՝** առաջին ատյանի դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելով,
2) **քաղաքացիական մոդուլից՝** քաղաքացիական գործով հայցադիմում կազմելով,
3) **դեոնթոլոգիայի մոդուլից՝** փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ խնդիրներ լուծելով:

Ունկնդրի կողմից որակավորման քննության յուրաքանչյուր մոդուլ հանձնում է առանձին օր, և կարգի համաձայն՝ մոդուլների հանձնման օրերի միջև ընդմիջումը պետք է լինի նվազագույնը 5 (հինգ) օր:

Յուրաքանչյուր մոդուլի հանձնման համար ունկնդիրը գնահատվում է առավելագույնը 20 (քսան) միավոր, իսկ որակավորման քննությունը հանձնած է համարվում և արտոնագիր ստանալու իրավունք է ձեռք բերում այն ունկնդիրը, ով յուրաքանչյուր մոդուլի համար ստացել է առնվազն 12 (տասներկու) միավոր:

Որակավորման քննությունները բոլոր մոդուլներից իրականացվում է աշխատանքի ստուգման գործընթացում թեկնածուի անձի բացահայտումը (աշխատանքի հեղինակի նույնականացումը) բացառող կարգով:

Համապատասխան մոդուլից առաջադրանքն ավարտելուց հետո ունկնդիրն իր աշխատանքը տպագրում է երկու օրինակից, որոնց վրա փակցնում է այդ պահին պատահականությամբ արկղից վերցված

ծածկագրերը (շտրիխ կոդ): Ունկնդիրն իր աշխատանքի տպագրված օրինակներից մեկի վրա ստորագրում է ու անձամբ տեղադրում է կնքված արկղի մեջ, իսկ մյուս օրինակը, որի վրա առկա է միայն ծածկագիր (շտրիխ կոդը) հանձնվում է որակավորման հանձնաժողովին:

Ունկնդիրները սահմանված ժամին ներկայանում են քննության անցկացման վայր, ներկայացնում են անձը հաստատող փաստաթուղթ, թափանցիկ տարայից վիճակահանությամբ ընտրում իրենց քննասեղանը և նստարանը և ստորագրում են գրանցման թերթիկը: Ունկնդիրներն իրենց կազմից ընտրում են խնդիրները թափանցիկ տարայից հանող անձանց, որից հետո ունկնդիրների ներկայությամբ իրենց նույնականացման ծածկագրերը և շտրիխ-կոդերը՝ Excel ծրագրով անունների և ծածկագրերի միացության հերթականությունը տարբեր կերպ խառնելու միջոցով պահպանվում է էլեկտրոնային կրիչի վրա, ծածկագրերը և շտրիխ կոդերը տպվում են թղթի վրա և տեղադրվում թափանցիկ, կնքված արկղի մեջ, որից հետո նույն արկղի մեջ տեղադրվում է կրիչի վրա առկա միակ նյութը: Շտրիխ կոդերով և անուններով տարբերակը (որից հնարավոր չէ տեղեկանալ ծածկագրի մասին) ինքնակպչուն թղթի վրա է տպվում և հանձնվում է Հանձնաժողովին՝ հետագայում աշխատանքի վրա փակցնելու համար:

Ունկնդիրներն աշխատանքն ավարտելուց հետո, այն տպում են երկու օրինակից, որոնցից մեկ օրինակի վրա հանձնաժողովի ներկայացուցիչը փակցնում է շտրիխ կոդ պարունակող ինքնակպչուն թերթիկը և այն հանձնում Հանձնաժողովին, իսկ մյուս օրինակի վրա փակցնում է ունկնդրի անուն ազգանունը և շտրիխ կոդը պարունակող ինքնակպչուն թերթիկը, այն ստորագրվում է ունկնդրի կողմից և տեղադրվում թափանցիկ, կնքված արկղի մեջ:

Յուրաքանչյուր տարի երկու անգամ Փաստաբանների պալատում անցկացվում են որակավորման քննություններ: 2015 թվականին Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմակերպել է երկու որակավորման քննություն՝ աշնանը և գարնանը, որոնց շրջանակում որակավորման քննություն են հանձնել ինչպես մեկ տարի ուսուցում անցած մինչև 5 տարվա մասնագիտական ստաժ ունեցող ունկնդիրները, այնպես էլ 5 տարուց ավել մասնագիտական ստաժ ունեցող և 6 ամիս ուսուցում անցած ունկնդիրները:

Ընդամենը 2015 թվականին որակավորման քննություններին մասնակցել են **176 ունկնդիր** *(2015թ. ընդունված ունկնդիրների թվին ավելացել է նաև առնվազն 5 տարվա իրավաբանի ստաժ ունեցող ունկնդիրները, որոնք սովորում են վեց ամիս)*, որոնցից որակավորման քննությունը չեն հանձնել **19**

ունկնդիր:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս փաստաբանը Փաստաբանների պալատի խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում երդում է տալիս:

Արդեն ձևավորված ավանդույթի համաձայն Փաստաբանական դպրոցի շրջանավարտները փաստաբանական գործունեության արտոնագրեր են ստանում Փաստաբանների պալատի տարբերանշանով պատմուճաններով և գլխարկներով:

Նման հանդիսավոր պայմաններում 2015 թվականի ընթացքում փաստաբանական գործունեության արտոնագրեր են ստացել **128 փաստաբաններ** (որակավորման քննություն հանձնած անձը կարող է վեց ամսվա ընթացքում դիմել արտոնագիր ստանալու համար), որոնցից 55-ը՝ ապրիլի 25-ին, իսկ 73-ը՝ նոյեմբերի 28-ին:

* * *

➢ ***Փաստաբանական դպրոցում բացվել է դատական նիստերի դահլիճ.***

2015 թվականի նոյեմբերի 13 -ին Փաստաբանական դպրոցում բացվել է դատական նիստերի դահլիճը: Դահլիճը կահավորվել է ֆրանսահայ բարերար Ռայմոն Եզեգելյանի կողմից տրված նվիրատվության միջոցներով:

Փաստաբանական դպրոցի դատական նիստերի դահլիճը որևէ կերպ չի զիջում Հայաստանի Հանրապետության դատարաններում առկա դատական նիստերի իրական դահլիճներին, դրանում առկա են Հայաստանի Հանրապետության դատական Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով սահմանված դատական նիստերի դահլիճի համար պարտադիր համարվող պետական խորհրդանիշները՝ Հայաստանի Հանրապետության զինանշանը և Հայաստանի Հանրապետության

դրոշը, ինչպես նաև բոլոր պայմաններն ունկնդիրների կողմից դատախաղեր կազմակերպելու համար:

Փաստաբանական դպրոցի դատական նիստերի դահլիճի բացմանը, ինչպես նաև այդ կապակցությամբ Փաստաբանական դպրոցի ունկնդիրների կողմից կազմակերպված դատախաղին մասնակցել է նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը, ով կարևորել է դատական նիստերի դահլիճի բացումն ու ընդգծել, որ դրա արդյունքում Փաստաբանական դպրոցի ունկնդիրն ուսուցման ընթացքում հնարավորություն կստանա ամբողջությամբ տիրապետելու դատական գործընթացի նրբություններին:

* * *

➢ ***Փաստաբանական դպրոցում ներդրվել է հեռավար ուսուցման նոր համակարգ.***

2015 թվականի մարտից օգոստոս ամիսների ընթացքում Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում Փաստաբանական դպրոցի համար պատրաստվել է ***հեռավար ուսուցման նոր հարթակ***, որը հնարավորություն է տալիս նոր որակով իրականացնել հեռավար ուսուցումը:

Հեռավար ուսուցման հարթակը կառուցված է ԿԱՆՎԱՍ օպերացիոն համակարգի հենքի վրա: Հարթակի բաղկացուցիչ մաս է հանդիսանում նաև Apple և Android օպերացիոն համակարգերով աշխատող սմարթֆոնների համար մշակված բջջային հավելվածները, որոնք նույնպես հնարավորություն են տալիս ուսումնասիրել դասընթացը:

Ծրագիրն անցել է փորձարկման փուլը, իսկ դրա պաշտոնապես գործարկումը նախատեսվում է իրականացնել 2016 թվականի գարնանային հոսքի ուսուցման ընթացքում:

Համաշխարհային բանկի կողմից իրականացվող մեկ այլ ծրագրով Փաստաբանական դպրոցի դասախոսների հետ համատեղ հեռավար ձևաչափով պատրաստվել և նոր համակարգ են ներբեռնվել թվով 24 դասընթացներ, որոնք ներառում են աուդիո և վիդեո բաղադրիչներ, տեսաֆիլմեր, էլեկտրոնային նյութեր, վիդեոկոնֆերանսներ, PowerPoint ձայնագրություններ և թեստեր:

* * *

- ***Ստեղծվել է Փաստաբանական դպրոցի իրավաբանական կլինիկան.***

2015 թվականի նոյեմբերին Փաստաբանական դպրոցում ստեղծվել է «Իրավաբանական կլինիկա», որը 2015 թվականի նոյեմբերի 19-ից տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն Երևան քաղաքի և մարզերի բնակչության խոցելի խավին:

Իրավաբանական անվճար ծառայությունների մատուցումը իրականացվում է Կլինիկայի ներքին միջոցներով փաստաբանական դպրոցի ունկնդիրների միջոցով, որոնք գործում են հանրային պաշտպանների և փաստաբանների մենթորության[6] ներքո: Իրավաբանական օգնությունը ներառում է ոչ միայն խորհրդատվություն, այլև փաստաթղթերի կազմում, հետազոտություն, ինչպես նաև ներկայացուցչություն:

Անվճար իրավաբանական ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում և ՀՀ մարզերում՝ հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում: 2015 թվականի նոյեմբերի 19-ից սկսած մինչև դեկտեմբեր ամիսը Իրավաբանական կլինիկայի միջոցներով շուրջ **250 քաղաքացի անվճար** իրավաբանական օգնություն են ստացել, իսկ նշված օգնության շրջանակներում կլինիկայի մասնագետների կողմից կազմվել են ընդհանուր 8 հայցադիմումներ և 2 վերաքննիչ բողոքներ, 5 դիմումներ, ինչպես նաև միջնորդություններ, տրամադրվել են հայցադիմումների և բողոքների ձևանմուշներ:

* * *

[6] Մենթորը խորհրդատու է, որն ունի մասնագիտական ձեռքբերումներ և անձնական կենսափորձ, հասարակության շրջանում՝ որոշակի դիրք: Մենթորն ուղղորդողի դեր է կատարում, որպեսզի ապագա հովանավորյալն այդ փորձը հնարավորինս կարողանա օգտագործել իր ուսումնառության և հետագա աշխատանքի ընթացքում:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

➢ ***Փաստաբանների պալատի առանձնացված ստորաբաժանումների ավելացում.***

Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում փաստաբանների խնդիրների համակարգման և Փաստաբանների պալատի մարզային քաղաքականության իրականացման գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով դեռևս 2014 թվականին Փաստաբանների պալատի խորհրդի 24.09.2014 թվականի թիվ 27/6-Լ որոշմամբ ստեղծվել էր Փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչություն:

Հյուսիսային ներկայացուցչության գրասենյակը սկսել է գործել 2015 թվականից սկսած:

Ներկայացուցչության տարածքում գործում են **94 փաստաբաններ** (48-ը՝ Լոռի, 37-ը՝ Շիրակ, 9-ը՝ Տավուշ), որոնցից 9-ը՝ հանրային պաշտպաններ են:

Հյուսիսային ներկայացուցչության գրասենյակում առանձին սենյակ է հատկացվել նաև Հայաստանի Հանրապետության այլ տարածքներից փաստաբանական գործունեության հետ կապված Վանաձոր քաղաք ժամանած փաստաբանների համար, որտեղ ստեղծված են բոլոր հարմարավետ պայմանները աշխատելու համար:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ***Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության ակտիվացում.***
- ***Փաստաբանների իրավունքների իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, տարածում և քննարկումների կազմակերպում.***

Փաստաբանների պալատի նախագահի 12.08.2014թ. թիվ 294-Լ որոշմամբ ստեղծվել էր **փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով:**

2015 թվականի ընթացքում փաստաբանների իրավու նքների պաշտպանության հանձնաժողովի կողմից արձանագրվել են ներքոնշյալ միջադեպերը.

* * *

1) ***Փաստաբաններ Ավետիք Իշխանյանին, Լուսինե Սահակյանին ու Արգիշտի Կիվիրյանին ազատությունից զրկելու վերաբերյալ միջադեպ.***

2015 թվականի հունվարի 15-ին Գյումրի և Երևան քաղաքներում տեղի են ունեցել բողոքի զանգվածային միջոցառումներ՝ Գյումրու ռուսական ռազմակայանի զինծառայող՝ Վալերի Պերմյակովի կողմից 2015թ. հունվարի 12-ին Գյումրի քաղաքում Ավետիսյանների ընտանիքի վեց անդամների սպանության կապակցությամբ:

Նույն օրը՝ երեկոյան ժամը 22:00-ի սահմաններում մի քանի տասնյակ քաղաքացիներ մասնակցել են Երևան քաղաքի Ազատության հրապարակում տեղի ունեցող մոմավառությանը: Նշված խաղաղ հավաքի վայրում են գտնվել նաև Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Լուսինե Սահակյանը, ինչպես նաև փաստաբաններ Ավետիք Իշխանյանը և Արգիշտի Կիվիրյանը:

Ի թիվս հավաքի մասնակից մի քանի տասնյակ քաղաքացիների, ժամը 22:15-ի սահմաններում Ավետիք Իշխանյանը, իսկ ժամը 23:05-ի սահմաններում նաև Լուսինե Սահակյանն ու Արգիշտի Կիվիրյանը բռնության գործադրմամբ զրկվել են ազատությունից ու տեղափոխվել ոստիկանության տարբեր բաժիններ:

Փաստաբան Ավետիք Իշխանյանը տեղափոխվել է ՀՀ ոստիկանության

Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին, որտեղ շուրջ երկու ժամ անազատության մեջ պահվելուց հետո, նրան հայտնել են, որ բերման է ենթարկվել իբր իր կողմից ոստիկանի օրինական պահանջին չենթարկվելու փաստի առթիվ իրականացվող վարչական վարույթի շրջանակներում:

Փաստաբաններ Լուսինե Սահակյանն ու Արգիշտի Կիվիրյանը առանց որևէ պատճառաբանության տեղափոխվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնին հարակից տարածք, ապա կրկին առանց որևէ պատճառաբանության, բերման ենթարկված ևս մեկ քաղաքացու հետ, 50 րոպե անց ազատ են արձակվել, անգամ առանց ոստիկանության բաժին մուտք գործելու:

Նշված միջադեպի կապակցության փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը հանդես է եկել համապատասխան **հայտարարությամբ**, որով մտահոգություն է հայտնել փաստաբաններ Ավետիք Իշխանյանի, Լուսինե Սահակյանի և Արգիշտի Կիվիրյանի իրավունքների ու ազատությունների սահմանափակման փաստով և կոչ է արել պատկան մարմիններին կատարվածի կապակցությամբ իրականացնել համապարփակ քննություն, և դրա արդյունքներով պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց:

* * *

2) *Փաստաբան Լիանա Բալյանի նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ միջադեպ.*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ՇԴ2/0004/01/15 քրեական գործով փաստաբան Լիանա Բալյանը իրականացրել է ամբաստանյալ՝ Մանվել Ինգլիզի Վարդանյանի պաշտպանությունը, ով մեղադրվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ:

2015 թվականի մայիսի 14-ին նշանակված հերթական դատական նիստի ժամանակ փաստաբան Լիանա Բալյանը Շիրակի մարզի դատախազի տեղակալ, գործով մեղադրող՝ Ա. Ավետիսյանին բացարկ է հայտնել: Դատավոր՝ Ա. Մանուկյանը, փաստաբանի միջնորդությունը քննարկելու և որոշում կայացնելու նպատակով հայտարարել է ընդմիջում և հեռացել խորհրդակցական սենյակ: Այդ ընթացքում փաստաբան Լիանա Բալյանը դուրս է եկել դատարանի դահլիճից և փորձել է գնալ դատարանի գրասենյակ, որտեղ դատավարության որոշ մասնակիցներ, անծանոթ անձանց հետ միասին հարձակվել են փաստաբանի վրա, վերջինիս նկատմամբ՝ մասնագիտական

պարտականությունները կատարելու կապակցությամբ սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ հնչեցրել:

Փաստաբան Լիանա Բալյանի անվտանգությունը հնարավոր է եղել ապահովել միայն դատական կարգադրիչների միջոցով, ովքեր շրջապատելով փաստաբանին բարձրացրել են դատարանի երկրորդ հարկ:

Միջադեպի վերջին պահը նկարահանվել էր «Առավոտ» թերթի լրագրող՝ Նունե Արևշատյանի կողմից: Մինչ 18:00-ն տևած դատական նիստի ողջ ընթացքում կարգադրիչներն ապահովել են փաստաբան Լիանա Բալյանի անվտանգությունը:

15.05.2015թ. նշանակված հերթական դատական նիստին փաստաբանը չի մասնակցել՝ մտահոգված լինելով իր անվտանգության մասին:

Հարձակման դեպքի առթիվ և մամուլում տարածված հաղորդագրության հիման վրա՝ Շիրակի մարզի դատախազ Ռ. Ասլանյանը ցուցում է տվել Գյումրու Մուշի ոստիկանության բաժնում կատարել հետաքննություն:

Նշված միջադեպի կապակցության փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը հանդես է եկել համապատասխան **հայտարարությամբ**, որով մտահոգություն է հայտնել փաստաբան Լիանա Բալյանի կողմից իր մասնագիտական պարտականություններն անարգել կատարելու իրավունքի խախտման փաստով և կոչ է արել պետական լիազոր մարմիններին կատարվածի կապակցությամբ իրականացնել լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն և պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց:

* * *

3) *Փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ իրականացված քրեական հետապնդման վերաբերյալ.*

Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը՝ փաստաբան Տիգրան Հայրապետյանի, Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի, Փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Սիմոն Բաբայանի, Կարեն Սարդարյանի, Մելանյա Առուստամյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի և Փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախմբի համակարգող Գևորգ Մկրտչյանի հետ համատեղ 2015 թվականի օգոստոսի 20-ին Փաստաբանների պալատում քննարկել է 27.05.2015 թվականին Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Խ. Մեջլումյանի կողմից կայացված փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի (Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը)

2-րդ մասով[7] քրեական գործ հարուցելու մասին որոշումը:

Փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու նախապատմությունը հանգում է հետևյալին.

– Փաստաբան Տիգրան Հայրապետյանը թիվ 62228314 քրեական գործին մասնակցել է որպես տուժող Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ:

– Նշված գործով ՀՀ ՀՔԾ ՀԿԳ ավագ քննիչ Լ. Մելքոնյանը 27.01.2015 թվականին որոշում է կայացրել ամբուլատոր դատահոգեբուժական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու մասին, պարզելու համար՝ արդյո՞ք Ժուլետա Ամարիկյանը հոգեկան հիվանդությամբ տառապում է, թե ոչ, եթե այո, ի՞նչ հիվանդությամբ և հարակից այլ հարցերով:

– Տուժող Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ, փաստաբան Տիգրան Հայրապետյանը միջնորդություններ է ներկայացրել՝ փորձագետին բացարկ հայտնելու, նյարդաբանին և Ամարիկյանի ընտրած հոգեբույժին հանձնաժողովի կազմում ընդգրկելու և այդ կապակցությամբ փորձաքննության անցկացումը հետաձգելու մասին:

– Քննիչ Լ. Մելքոնյանը փորձաքննության անցկացումը հետաձգելու մասով միջնորդությունները բավարարել է, իսկ փորձագետներին հայտնած բացարկները մերժել:

– ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության ավագ դատախազ Հ. Պետրոսյանի 30.03.2015թ. որոշմամբ բավարարել է փաստաբան Տիգրան Հայրապետյանի կողմից ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի նախագահ, փորձագետ Վ. Բաբայանին հայտնած բացարկը:

– Քննիչ Լ. Մելքոնյանը, սակայն, իր 15.04.2015թ. գրությամբ, Հանձնաժողովի նախագահ, բացարկված և բացարկն ընդունված փորձագետ Վ. Բաբայանին ուղղված գրությամբ նշել է. *«Նկատի ունենալով, որ գործով տուժողին փորձաքննությանը ներկայանալուն պարտադրելը կամ վերջինիս փորձաքննության կատարման վայր հարկադրաբար ներկայացնելը քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, ինչպես նաև քրեական գործի նախաքննության ժամանակի անհարկի ձգձգումից խուսափելու նպատակով առաջարկում եմ դատահոգեբուժական փորձաքննությունն անցկացնել Ժ.Ամարիկյանի բացակայությամբ և … համապատասխան եզրակացությունն*

[7] ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:*

ուղարկել ՀՀ հատուկ քննչական ծառայություն»:

– Նույն գրության պատճենն ուղարկվել է նաև փաստաբան Տիգրան Հայրապետյանին և տուժող Ժանետա Ամարիկյանին:

– Փաստաբան Տիգրան Հայրապետյանի պնդմամբ քննիչ Լ. Մելքոնյանը տուժող Ժանետա Ամարիկյանին այլ անձի հետ առերեսելու պատրվակով 21.05.2015թ. հրավիրել է ՀՔԾ, սակայն ոչ թե առերեսում է իրականացրել, այլ արձանագրություն է կազմել տուժող Ժուլետա Ամարիկյանին նույն օրը ժամը 15:00-ին նշանակված փորձաքննությանը մասնակցելու անհրաժեշտության մասին, պարզաբանելով, որ հրաժարվելու դեպքում նա կարող է բերման ենթարկվել: Սա այն դեպքում, երբ մինչ այդ արդեն տեղեկացրել էր, որ փորձաքննությունն անցկացվելու է տուժողի բացակայությամբ, ինչպես նաև պարզաբանել էր, որ տուժողին փորձաքննությանը ներկայանալուն պարտադրելը կամ վերջինիս փորձաքննության կատարման վայր հարկադրաբար ներկայացնելը քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ:

– 27.05.2015թ. ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչ Խ. Մեջլումյանը քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին թիվ 18-350կգ-15 որոշումն է կայացրել՝ թիվ 62228314 քրեական գործով տուժողի ներկայացուցիչ փաստաբանի կողմից արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործ հարուցելու մասին:

– Որոշման մեջ նշված է, որ 2015 թվականի մայիսի 21-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում «Նորք» հոգեբուժական կենտրոնում փաստաբանը մասնակցելով ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի հերթական նիստին, հանձնաժողովի կազմում ընդգրկված փորձագետներին վիրավորել է՝ նրանց սադրիչ հարցեր ուղղելով, վերջիններիս կողմնակալության մեջ անհիմն մեղադրելով և այլ դիտավորյալ գործողություններով, վիճաբանել հանձնաժողովի անդամների հետ, խաթարել հանձնաժողովի բնականոն աշխատանքը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի պահանջի խախտմամբ չի ենթարկվել ապօրինի վարքագիծը դադարեցնելու քննիչի օրինական կարգադրություններին, ինչի արդյունքում փորձաքննությունը հերթական անգամ չի կայացել, հետաձգվել է, որպիսի դիտավորյալ գործողություններով փաստաբանը միջամտել է գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու նրա գործունեությանը:

Փաստաբանների իրավունքների հանձնաժողովը՝ քննարկելով փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման դեպքը կայացրել է որոշում, որով հստակ իրավական վերլուծություն է կատարել քննարկվող դեպքի վերաբերյալ՝ արձանագրելով, որ փաստաբան Տիգրան

Հայրապետյանի նկատմամբ քրեական գործը հարուցած քննիչի նման մոտեցումը սխալ է և հիմնազուրկ, իսկ քրեական գործի հարուցումը փաստաբանի նկատմամբ, իր մասնագիտական պարտականությունը կատարելու առնչությամբ ճնշում գործադրելու միջոց է:

Նշված միջադեպի կապակցության փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը հանդես է եկել համապատասխան **հայտարարությամբ**, որով՝

- *Գտել է, որ ՀՀ ՀՔԾ քննիչ Լ. Մելքոնյանի կողմից զեկուցագրի հիման վրա ՀՔԾ քննիչ Խ. Մեջլումյանի կողմից թիվ 18-350կգ-15 քրեական գործի հարուցումը փաստաբան Տիգրան Հայրապետյանի մասնագիտական ակտիվ գործունեության դեմ է ուղղված.*
- *Դատապարտել է փաստաբանի նկատմամբ նման հետապնդումը.*
- *Հայտարարել է, որ օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու է փաստաբան Տիգրան Հայրապետյանի շահերն ու տվյալ պահին վարույթն իրականացնող մարմնին կոչ է արել դադարեցնել փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումն ու կարճել քրեական գործի վարույթը:*

* * *

4) *Փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ հարուցված քրեական գործի վերաբերյալ.*

2015 թվականի սեպտեմբերի 10 -ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբանի իրավունքների պաշտպանության հանձնաժողովի ընդլայնված նիստ, որին մասնակցել են հանձնաժողովի համակարգող Կարեն Մեժլումյանը, հանձնաժողովի անդամներ՝ Լիանա Բալյանը, Գեղամ Հակոբյանը, Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, ինչպես նաև փաստաբաններ Նիկոլայ Բաղդասարյանը և Նազելի Վարդանյանը:

Քննարկման համար հիմք էր հանդիսացել այն հանգամանքը, որ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանին մեղադրանք էր առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 144 հոդվածով, այն բանի համար, որ Նիկոլայ Բաղդասարյանը, զբաղվելով փաստաբանական գործունեությամբ և հանդիսանալով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական գործով ամբաստանյալ Գագիկ Գեղամյանի պաշտպանը, առանց նույն գործով տուժող Տաթևիկ Հովսեփյանի համաձայնության ապօրինի հավաքել և լրատվության միջոցով տարածել է վերջինիս վերաբերյալ անձնական գաղտնիք համարվող տեղեկություններ, մասնավորապես՝ ապօրինի ձեռք բերելով Տաթևիկ Հովսեփյանի հոգեկան

առողջության վերաբերյալ տեղեկություններ պարունակող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ուղարկված և որպես անձնական գաղտնիք դատարանի կողմից չհրապարակված 2013 թվականի օգոստոսի 13 -ի թիվ 701 գրության պատճենը՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ին «ATV» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի «Իմ արյունը չի վաճառվում» հաղորդման նկարահանման ժամանակ հաղորդավարի, հաղորդմանը հրավիրված հյուրերի և հանդիսատեսի ներկայությամբ, առանց Տաթևիկ Հովսեփյանի համաձայնության, տարածել է նշված գրության բովանդակությունը՝ հրապարակելով, որ Տաթևիկ Հովսեփյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ և նրա ցուցմունքը չէր կարող իրավական ուժ ունենալ:

Քննարկման արդյունքում փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովն արձանագրել են, որ դռնբաց դատական նիստին փաստաբանի կողմից անխոչընդոտ իր մասնագիտական դատավարական գործողություններն իրականացնելը չի կարող առաջացնել քրեական պատասխանատվություն, ինչպե ս նաև կարևորել են, որ պետք է պարզել, արդյո՞ք դատարանը սահմանված կարգով միջոցներ ձեռնարկել է ապացույցը չհրապարակելու և այդ մասին փաստաբանին տեղեկացնելու համար.

Փաստաբանների պալատից նախագահի որոշմամբ Նիկոլայ Բաղդասարյանի շահերը մյուս գործընկերների հետ միասին դատարանում պաշտպանելու նպատակով որպես ներկայացուցիչ է նշանակվել փաստաբան, Փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախմբի համակարգող Գևորգ Մկրտչյանը:

Փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու նախապատմությունը հանգում է հետևյալին.

– Որպես մեղադրյալ ներգրավելու մասին 01.09.2015թ. որոշմամբ քննիչը փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 144 հոդվածով, այն բանի համար, որ նա, զբաղվելով փաստաբանական գործունեությամբ և հանդիսանալով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական գործով ամբաստանյալ Գագիկ Գեղամյանի պաշտպանը, առանց նույն գործով տուժող Մարկոս Հովսեփյանի մոր՝ Տաթևիկ Հովսեփյանի համաձայնության ապօրինի հավաքել և լրատվության միջոցով տարածել է վերջինիս վերաբերյալ անձնական գաղտնիք համարվող տեղեկություններ, այն է՝ ապօրինի ձեռք բերելով Տաթևիկ Հովսեփյանի հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկություններ պարունակող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ

բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ուղարկված և որպես անձնական գաղտնիք դատարանի կողմից չհրապարակված 2013 թվականի օգոստոսի 13-ի թիվ 701 գրության պատճենը՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ին «ATV» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի «իմ արյունը չի վաճառվում» հաղորդման նկարահանման ժամանակ հաղորդավարի, հաղորդմանը հրավիրված հյուրերի և հանդիսատեսի ներկայությամբ, առանց Տաթևիկ Հովսեփյանի համաձայնության, տարածել է նշված գրության բովանդակությունը՝ հրապարակելով, որ Տաթևիկ Հովսեփյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ և նրա ցուցմունքը չէր կարող իրավական ուժ ունենալ:

– Փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը ինչպես դատավարական փաստաթղթերում, այնպես էլ փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նիստին բացատրություն տալով հայտնել է, որ Տաթևիկ Հովսեփյանի հիվանդության վերաբերյալ փաստաթուղթը ստացել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանից, իսկ դատարանն էլ այդ փաստաթուղթը իր միջնորդության հիման վրա է պահանջել ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունից, այսինքն՝ որպես դատավարության մասնակից, այդ փաստաթուղթն իրեն հասանելի է եղել: Բացի այդ, դատարանն իրենից չի պահանջել և ստորագրություն չի վերցրել նշված փաստաթուղթը չհրապարակելու մասին, այն դեպքում, երբ նման պահանջ է պարունակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասը:

– Նիկոլայ Բաղդասարյանը հայտնել է նաև, որ մինչ իր կողմից փաստաթղթի հրապարակումը՝ այն արդեն իսկ հրապարակված եղել է:

Նշվածի հաշվառմամբ փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը գտել է, որ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը Տաթևիկ Հովսեփյանի հիվանդության վերաբերյալ փաստաթուղթն ապօրինի չի ձեռք բերել, քանի որ որպես դատավարության մասնակից՝ պաշտպան, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի (պաշտպանի իրավունքները և պարտականությունները) համաձայն այն իրեն հասանելի է եղել:

Հանձնաժողովը նաև փաստել է, որ նշված հոդվածում պաշտպանի իրավունքները սպառիչ չեն թվարկված, այն դեպքում, երբ պարտականությունները թվարկված են սպառիչ և վերը նշված իրավիճակում պաշտպան Նիկոլայ Բաղդասարյանը պաշտպանի պարտականությունները, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 5-րդ մասում նշվածները, չի խախտել և գործել է իր պաշտպանյալի շահերից ելնելով:

Հանձնաժողովը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի և 170-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները հաշվի

առնելով և նկատի ունենալով այն, որ դատարանը փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանից ստորագրություն չի վերցրել Տաթևիկ Հովսեփյանի հիվանդության վերաբերյալ փաստաթուղթը չհրապարակելու պահանջով, գտել է, որ փաստաբան, քրեական գործով պաշտպան Նիկոլայ Բաղդասարյանի գործողություններում բացակայել է ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածի հանցակազմը, ուստի չի բացառվում, որ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ քրեական հետապնդումն իրականացվում է նրա վրա ճնշումներ գործադրելու համար՝ ակտիվ փաստաբանական և հասարակական գործունեության կապակցությամբ:

Վերոգրյալից ելնելով Հանձնաժողովը հանդես է եկել համապատասխան **հայտարարությամբ**, որով կոչ է արել վարույթն իրականացնող մարմիններին դադարեցնել փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ քրեական հետապնդումը:

* * *

5) *Փաստաբան Արշավիր Խալափյանի նկատմամբ հարուցված քրեական գործի վերաբերյալ.*

2014 թվականի օգոստոսի 05-ին փաստաբան Արշավիր Սերժիկի Խալափյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով, այն մեղադրանքի համար, որ Արշավիր Խալափյանը 07.04.2014 թվականին, նախ որպես Կապան քաղաքի Ռ.Մինասյան փողոցի 17 շենքի բնակիչ գրավոր դիմել է Կապանի քաղաքապետարան՝ Աշոտ Կույումջյանի կողմից նշված հասցեին հարակից տարածքում ապօրինի շինարարություն կատարելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար, իսկ 18.04.2014 թվականին արդեն հանդես գալով որպես ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ Սյունիքի մարզային մասնաճյուղի նախագահ և Սյունիքի հակակոռուպցիոն կենտրոնի համակարգող, դարձյալ նույն նպատակով՝ հերթական դիմումն է ներկայացրել քաղաքապետարան, որից հետո 2014 թվականի մայիսի 1-ին վերոհիշյալ հյուրանոցային համալիրի թիվ 210 առանձնասենյակում հանդիպել է Աշոտ Կույումջյանին ու իր կողմից ներկայացված դիմումների ընթացքի վերաբերյալ գործողություններ չկատարելու, այն է՝ հետևողականություն չցուցաբերելու, նոր դիմումներ չներկայացնելու՝ ավելի խիստ վարչական պատասխանատվության ենթարկելու համար խնդիրներ չառաջացնելու, դարձյալ հանդես գալով որպես փաստաբան և հիշյալ կառույցների մարզային ներկայացուցիչ՝ Աշոտ Կույումջյանից որպես կաշառք ապօրինի պահանջել է 1500

ԱՄՆ դոլար:

Փաստաբանի իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նիստում նշված հարցը քննարկվելուց բացի, 2015 թվականում հանձնաժողովի համակարգող Կարեն Մեժլումյանը Արմենիա հեռուստաընկերությունում մասնակցել է այդ թեմային վերաբերող հաղորդմանը և ներկայացրել է իր պարզաբանումները:

Փաստաբան Արշավիր Խալափյանի շահերը պաշտպանող այլ փաստաբաններից բացի, նրա շահերի պաշտպանությանը ներգրավվել են նաև՝ Փաստաբանի իրավունքների պաշտպանության հանձնաժողովի անդամ փաստաբան Արմինե Ֆանյանը (պաշտպանել է վերաքննիչ դատարանում և վճռաբեկ բողոք է ներկայացրել վճռաբեկ դատարան), ինչպես նաև փաստաբան Արա Զոհրաբյանը (վճռաբեկ բողոք է ներկայացրել վճռաբեկ դատարան):

Պաշտպանական կողմը նախադեպային խնդիր է արձանագրել նշված քրեական գործով: Վճռաբեկ բողոքում, մասնավորապես նշվել են հետևյալ փաստարկները՝

Առևտրային կաշառք ստանալու օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ արարքով՝ փաստաբանը պետք է ապօրինաբար գումար ստանա կամ պահանջի:

Օբյեկտիվ կողմի «ապօրինաբար» գումար ստանալու հատկանիշը բացահայտելու համար անհրաժեշտ է քննարկել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը:

Այսպես՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանն իրավունք ունի փոխհատուցում ստանալու իր ծառայությունների դիմաց:

Այս նորմերից հետևում է, որ՝

- Փաստաբանն իր կարգավիճակից բխող փաստաբանական գործունեություն իրականացնող է համարվում, եթե այն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի իրավունքների պաշտպանությանը: Այլ կերպ ասած՝ առկա է իրավաբանական օգնություն ստացող անձ՝ վստահորդ.

- Կաշառատուի դերում չի կարող հանդես գալ փաստաբանի վստահորդը, քանի որ վերջինիս կողմից տրված փոխհատուցումն օրինական է և երաշխավորված է օրենքով:

Արշավիր Խալափյանին վերագրվող դեպքով, բացակայում է

իրավաբանական օգնություն ստացող անձը՝ վստահորդը, քանի որ Արշավիր Խալափյանը գործել է իր համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի բնորոշմամբ փաստաբանական գործունեության համար առնվազն անհրաժեշտ են ԵՐԿՈՒ ԱՆՁ՝ իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանը և իրավաբանական օգնություն ստացող վստահորդը:

Քրեական գործով մեղադրանքի կողմը չի բացահայտել Արշավիր Խալափյանի վստահորդին: Այս պայմաններում, չէր կարող ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառվել Ա.Խալափյանի նկատմամբ:

Հատկանշական է, որ մեղադրանքի կողմի և ստորադաս դատարանների տրամաբանությամբ շարժվելու դեպքում, փաստաբանի կարգավիճակ ունեցող անձը ինքն իր անունից և իր շահի համար մասնակցությամբ գործով չի կարող հակառակորդ կողմի հետ հաշտության համաձայնություն կնքել և գումար ստանալ, քանի որ դա կդիտարկվի «առևտրային կաշառք»: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասի բնորոշումից հետևում է, որ այն կիրառելի է, երբ՝

- Փաստաբանը ներկայացնում է վստահորդի շահերը.
- Փաստաբանը հակառակորդ կողմից ի վնաս իր վստահորդի շահերի՝ ապօրինաբար ստացել է գումար.
- Գումարը ստացել է ի վնաս իր վստահորդի (հօգուտ վստահորդի հակառակորդ կողմի) որևէ գործողություն իրականացնելու կամ պասիվ վարքագիծ դրսևորելու համար:

Սույն գործով հաստատվել է, որ Արշավիր Խալափյանը ՉԻ ՈՒՆԵՑԵԼ ՎՍՏԱՀՈՐԴ: Նա ներկայացրել է անձամբ իր շահերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը պաշտպանների 2015թ. վճռաբեկ բողոքներն ընդունել է վարույթ:

* * * * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Փաստաբանների նկատմամբ հարուցված քրեական գործերի թիվը՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի նշումով և հնարավորության դեպքում՝ նաև գործի ընթացքի մասին տեղեկություններով կարելի տեսնել ստորև.

Ժամանակահատվածը	*2014թ.*	*2015թ.*
Փաստաբանների նկատմամբ հարուցված քրեական գործերի թիվը	**3**	**6**

2014 թվականի ընթացքում փաստաբանների նկատմամբ հարուցված քրեական գործեր				
№	Փաստաբանի անունը, ազգանունը	Արտոնագիր	ՀՀ քրեական օրենսգրքի հոդված	Տեղեկություններ գործի ընթացքի մասին
1.	Ռուբիկ Մովսիսյան	846	266-րդ հոդված 2-րդ մասի 2 կետ	Կարճվել է հանցակազմի բացակայությամբ
2.	Արշավիր Խալափյան	731	200-րդ հոդված 3-րդ մաս	Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ է ընդունել
3.	Նիկոլայ Բաղդասարյան	95	144-րդ հոդված	Նախաքննություն

2015 թվականի ընթացքում փաստաբանների նկատմամբ հարուցված քրեական գործեր				
№	Փաստաբանի անունը, ազգանունը	Արտոնագիր	ՀՀ քրեական օրենսգրքի հոդված	Տեղեկություններ գործի ընթացքի մասին
1.	Տիգրան Հայրապետյան	159	332-րդ հոդված 2-րդ մաս	Կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով
2.	Իրինա Մանուկյան	392	178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ, 38-312-րդ հոդվածի 2-րդ մաս և 34-312-րդ հոդվածի 2-րդ մաս	Դատաքննություն
3.	Եղիկ Եփրեմյան	438	38-34-312-րդ հոդված	Դատաքննություն
4.	Էդուարդ Ասլանյան	499	178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ	Կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով
5.	Գևորգ Գրիգորյան	82	179-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախաքննություն
6.	Վարուժան Ավետիսյան	1339	35-225-րդ հոդվածի 1-ին մաս	Նախաքննություն

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

➢ ***Հայաստանի Հանրապետության մարզերում գործունեություն իրականացնող 80 փաստաբաններին շնորհվել են մեկ տարվա անդամավճարի կանխավճարի հավաստագրեր.***

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, բարերար Ռայմոն Եզեգելյանի և Փաստաբանների պալատի միջև համագործակցության շրջանակներում՝ Ռայմոն Եզեգելյանի կողմից կանխավճարի կարգով վճարվել է Հայաստանի Հանրապետության մարզերում հաշվառված և գործունեություն իրականացնող 80 (ութսուն) փաստաբանների մեկ տարվա (2015 թվականի) անդամավճարի գումարը, իսկ փաստաբաններին հանդիսավոր արարողության պայմաններում տրվել են անդամավճարի վճարման մասին հավաստագրեր:

Փաստաբանների պալատի նախագահի 28.04.2015թ. թիվ 90-Լ որոշմամբ հաստատվել է ««Փաստաբան Եզեգելյան» թոշակի 2015 թվականի շահառուներին որոշելու մասին» կարգն, ըստ որի՝ շահառուներին որոշելու համար ձևավորվում է ժամանակավոր հանձնաժողովը մարզում հաշվառված և գործունեություն իրականացնող փաստաբանների միջև առաջնահերթությունը տվել է տվյալ մարզի հետևյալ փաստաբաններին՝

1) 60-70 տարեկան փաստաբաններին՝ ոչ ավելի քան Մարզի շահառուների քանակի **հիսուն տոկոսը** (այս խմբի ներսում նախապատվությունը տրվում է առավել տարիքով փաստաբաններին).

2) 3-րդ կարգի հաշմանդամ փաստաբաններին՝ ոչ ավել քան Մարզի շահառուների քանակի **քսան տոկոսը** (այս խմբի ներսում նախապատվությունը տրվում է առավել վաղ հաշմանդամության կարգ ստացած փաստաբաններին).

3) Երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին՝ ոչ ավել քան **երեսուն տոկոսը** (այս խմբի ներսում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ առավել փոքր տարիքի երեխա ունեցող փաստաբաններին):

➢ ***Փաստաբաններին տրամադրվել է մասնագիտական գրականություն.***

Փաստաբանների պալատն իր գործընկերներից շարունակաբար ստանում է մասնագիտական գրականություն, որը տրամադրում է փաստաբաններին:

2015 թվականի ընթացքում Փաստաբանների պալա տը Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամից (IRZ) ստացել է Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, սահմանադրական իրավունք, Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ և այլն:

Նշված գրականությունից շուրջ **5600 գիրք** և իրավական ակտ տրամադրվել է փաստաբաններին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գործունեություն իրականացնող փաստաբաններին, և փաստաբանական գրասենյակներին:

Մասնագիտական գրականությունը մարզերում գործունեություն իրականացնող փաստաբաններին հասանելի դարձնելու համար յուրաքանչյուր մարզային համակարգողի գրասենյակում ձևավորվել է փոքրիկ գրադարան, որից մարզի փաստաբանը կարող է անհրաժեշտության դեպքում օգտվել:

Ընդհանուր 99 գիրք և իրավական ակտ է հանձնվել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստաբանների պալատին:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

➢ ***Փաստաբանների վերապատրաստման համակարգի շարունակական զարգացում.***

Փաստաբանների պալատում շարունակաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ:

Յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում և փաստաբաններին էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է հաջորդ ամսվա համար փաստաբանների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:

2015 թվականին Փաստաբաննե րի պալատի խորհրդի 18.12.2014թ. որոշմամբ «Փաստաբանների վերապատրաստման կարգում» փոփոխություններ կատարվեցին, որոնց արդյունքում ներդրվեց փաստաբանների վերապատրաստման ժամերի հաշվարկման կիսամյակային մոդելը:

2015 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի են ունեցել **191 անվճար վերապատրաստման դասընթացներ (չհաշված առցանց վերապատրաստման դասընթացները կամ Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված հաստատությունների կողմից վճարովի հիմունքներով անցկացվող դասընթացները)**, որը 81 դասընթացով կամ 74%-ով ավել է, քան 2014 թվականի ամբողջ ընթացքում (2014թ. տեղի են ունեցել 110 դասընթացներ):

➢ ***վերապատրաստման գործընթացում փաստաբանների կարիքների բացահայտում և վերապատրաստման արդյունավետության գնահատում.***

Փաստաբանների վերապատրաստման շարունակական զարգացման գործընթացի կարևորագույն նախապայմաններից է փաստաբանների կարիքների գնահատումը:

Վերապատրաստման դասընթացների արդյունավետության գնահատման նպատակով յուրաքանչյուր դասընթացին մասնակից փաստաբաններին տրվում են գնահատման հարցաթերթիկներ, որոնք անանուն կարգով և կամավորության սկզբունքով լրացվում են փաստաբանների կողմից: Գնահատման հարցաթերթիկում առաջադրված են հետևյալ հարցադրումները՝

1) արդյո՞ք թեմայի դասավանդումն արդյունավետ էր.

2) արդյո՞ք դասախոսի ներկայացրած նյութը հետաքրքիր էր.

3) Ի՞նչն է տվյալ դասընթացի թերությունը.

4) Ի՞նչն է տվյալ դասախոսի թերությունը.

5) Տվյալ դասընթացի ընթացքում արդյո՞ք մասնակիցը ստացել է գիտելիքներ (հմտություններ), որոնք հետագայում կարող է կիրառվել պրակտիկայում.

6) արդյո՞ք մասնակիցը կցանկանար ևս մեկ անգամ վերապատրաստվել տվյալ դասախոսի կողմից մեկ այլ թեմայի շրջանակներում.

Փաստաբանների պալատի որակավորման և մասնագիտական վերապատրաստման ծառայության կողմից իրականացվել է հետազոտություն՝ 2015 թվականի առաջին կիսամյակի (հունվարից հունիս) և 2015 թվականի երկրորդ կիսամյակի (հուլիսից դեկտեմբեր) վերապատրաստման դասընթացներից փաստաբանների գոհունակությունը պարզելու նպատակով:

✓ **2015 թվականի առաջին կիսամյակում (հունվարից հունիս)** տեղի է ունեցել **94 վերապատրաստման անվճար դասընթաց**, որոնց ընթացքում, ընդհանուր առմամբ, վերապատրաստվել **են 962 փաստաբաններ**: Հաշվետու ժամանակահատվածում կամավորության սկզբունքով լրացվել է շուրջ **629 հարցաթերթ**:

2015 թվականի առաջին կիսամյակի (հունվարից հունիս) ընթացքում լրացված գնահատման հարցաթերթիկում առկա չափանիշներից յուրաքանչյուրի մասով հետազոտության արդյունքները հանգում են հետևյալին.



Հարցվող փաստաբանների **95%-ը նշել է, որ վերապատրաստման դասընթացի թեմայի դասավանդումը եղել է արդյունավետ** իրենց համար: Միայն 1%-ն է նշել, որ դասընթացը արդյունավետ չի եղել, իսկ հարցվածների 4%-ը պատասխանել է, որ թեման մասամբ է արդյունավետ եղել:

Նշված ցուցանիշը վկայում է այն մասին, որ մասնակից փաստաբանները

հիմնականում գոհ են այն վերապատրաստման դասընթացներից: Այդ մասին է փաստում նաև հետևյալ հարցին տրված պատասխանների բաշխվածությունը՝



Հարցվող փաստաբանների **96%-ի համար դասախոսի ներկայացված նյութը եղել է հետաքրքիր**, 1%-ի համար՝ ոչ հետաքրքիր, իսկ 3%-ի համար՝ մասամբ հետաքրքիր:



Դասընթացների թերության մասին հարցին՝ փաստաբանների **93%-ը համարել է, որ դասընթացը թերությունների չի ունեցել**, 2%-ը՝ դասընթացին պրակտիկ հմտություններ չի ստացել, 1%-ը գտել է, որ գործնական աշխատանքն է բացակայել, իսկ 4%-ը տվել է այլ պատասխան, որը հիմնականում վերաբերվել է ժամանակի սղության, դասընթացի մասին անհատական կարծիքի արտահայտմանը և լսարանի ակտիվության հարցի քննարկմանը:

Ինչ վերաբերվում է դասավանդող դասախոսներին, ապա փաստաբանները տվել են հետևյալ պատասխանները՝



Փաստաբանների 97%-ը համարել է, որ դասախոսը ոչ մի թերություն չի ունեցել, 1%-ը դժգոհել է նյութի ոչ ճիշտ մատուցումից, 0.2%-ի կարծիքով դասախոսը լսարանի հետ չի կարողացել շփվել և համապատասխան մասնագիտական գիտելիքներ չի ունեցել, իսկ 0.3%-ը պնդել է, որ դասախոսը նյութը մատչելի չի կարողացել մատուցել: Հարցվածների 2%-ն այլ պատասխան տալով, շեշտել է դասախոսի պրոֆեսիոնալիզմը և անհատական գոհունակությունը կամ դժգոհությունը կոնկրետ այս կամ այն դասախոսից:

Հարցաթերթի այն հարցին, որը վերաբերվում է հետագայում դասընթացի ընթացքում ստացած հմտությունների հետագա կիրառմանը, փաստաբանների **92%-ը վստահություն է հայտնել, որ այդ գիտելիքները հետագայում իրեն անհրաժեշտ կարող են լինել**: Փաստաբանների 7%-ը պատասխանել է, որ օգտագործելու է մասամբ, և հարցվածների միայն 1%-ն է բացասական պատասխան տվել:

Հարցաթերթի վերջին հարցը վերաբերվում է մեկ այլ թեմայի շրջանակներում նույն դասախոսի կողմից վերապատրաստման դասընթաց անցնելուն, որին փաստաբանները պատասխանել են հետևյալ կերպ՝

Հարցվածների **98%-ը ցանկություն են հայտնել վերապատրաստվել նույն դասախոսի կողմից անցկացվող այլ դասընթացի շրջանակներում**, իսկ 2%-ը բացասական պատասխան է տվել:



✓ **2015 թվականի երկրորդ կիսամյակում (հուլիսից դեկտեմբեր)** տեղի է ունեցել **97 անվճար վերապատրաստման դասընթաց**, որոնց ընթացքում, ընդհանուր առմամբ, վերապատրաստվել **են 1094 փաստաբաններ**: Հաշվետու ժամանակահատվածում կամավորության սկզբունքով լրացվել է շուրջ **718** հարցաթերթ:

2015 թվականի երկրորդ կիսամյակի (հուլիսից դեկտեմբեր) ընթացքում լրացված գնահատման հարցաթերթիկում առկա չափանիշներից յուրաքանչյուրի մասով հետազոտության արդյունքները կարելի տեսնել ստորև ներկայացված գծապատկերներում.




Արդյո՞ք դասախոսի ներկայացրած նյութը հետաքրքիր էր.
5%
1%
94%
հետաքրքիր էր
հետաքրքիր չէր
մասամբ էր հետաքրքիր


Ի՞նչն էր տվյալ դասընթացի թերությունը (նշել բոլոր հնարավոր պատասխանները).
700
600
500
400
300
200
100
0
թեման արդիական չէր 0%
պրակտիկ հմտություններ չստացա 4%
գործնական աշխատանք չարվեց 3%
նյութը հետաքրքիր չէր 1%
դասընթացը ոչ մի թերություն չուներ 89%
այլ (առկայության դեպքում նշել Ձեր տարբերակը) 4%







➢ ***Փաստաբանների վերապատրաստման ծրագրերի պարբերական արդիականացում՝ հաշվի առնելով նաև փաստաբանների պահանջմունքները.***

Վերոնշյալ կետում ներկայացված գնահատման թերթիկներում նախատեսված է նաև հատուկ հատված, որտեղ վերապատրաստման

դասընթացների մասնակիցները կարող են առաջարկել նաև իրենց նախընտրած թեմաները: Փաստաբանները հնարավորություն ունեն իրենց նախընտրած վերապատրաստման թեմաների առաջարկներ ներկայացնել նաև էլեկտրոնային փոստի միջոցով:

«Փաստաբանների վերապատրաստման կարգին» համապատասխան՝ Փաստաբանների պալատի նախագահի կողմից վերապատրաստման դասընթացների թեմաները սահմանվում են կիսամյակային կարգով՝ հաշվի առնելով նաև գնահատման թերթիկներում, ինչպես նաև էլեկտրոնային փոստով փաստաբանների առաջարկած թեմաները:

Յուրաքանչյուր կիսամյակի համար Փաստաբանների պալատի նախագահի համապատասխան որոշումներով հաստատվում են շուրջ 150 վերապատրաստման թեմաներ, որոնք վերաբերում են քրեական, քաղաքացիական, վարչական և միջազգային իրավունքի տարբեր ոլորտներին, ինչպես նաև գիտագործնական և այլ ուղղվածություններին (օրինակ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք (դեոնթոլոգիա), դատական փորձաքննություններ, բարոյական վնասի հատուցման ինստիտուտը ՍԴ որոշման համատեքստում, Փաստաբանական գրասենյակի կառավարման առանձնահատկությունները, ա ոդյունավետ բանակցություններ, սթրեսի և կոնֆլիկտների կառավարում, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ և այլն):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փաստաբանների վերապատրաստման համար հաստատված թեմաների մոտ 90%-ն ընտրված են հենց փաստաբանների կողմից ներկայացված առաջարկներից:

➢ ***Փաստաբանների վերապատրաստման ծրագրերի մշակման գործընթացում փաստաբանների, դատավորների և դատախազների դպրոցների պատրաստման և վերապատրաստման ծրագրերի համեմատական վերլուծություն և կարիքների գնահատում.***

Փաստաբանական դպրոցի և Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի միջև 2015 թվականի մարտի 7-ին կնքվել է համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր:

Ըստ հուշագրի Փաստաբանական դպրոցը և Արդարադատության ակադեմիան փոխադարձ համաձայնություն են ձեռք բերել կազմակերպել համատեղ դասընթացներ, գիտական միջոցառումներ (համատեղ քննարկումներ (կլոր սեղաններ), գիտաժողովներ, սեմինարներ և այլն), համագործակցել

հեռաուսուցման հարթակի ներդրման և համատեղ հեռաուսուցման դասընթացների կազմակերպման նպատակով, միմյանց օժանդակել գիտական նյութերի, գրականության, ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հարցում, համատեղ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում իրականացնել գիտական հետազոտություններ, դասավանդման, հետազոտական աշխատանքների նպատակով անհրաժեշտության դեպքում իրականացնել կադրերի փոխանակում և այլն:

Նշված հուշագրի շրջանակներում Փաստաբանական դպրոցը և Արդարադատության ակադեմիան 2015 թվականի գարնանից սկսել են և մինչ օրս պարբերաբար իրականացնում են **դատավորների և փաստաբանների համար համատեղ դասընթացներ:**

Նշված նախաձեռնության շրջանակներում 2015 թվականի մարտի 3-ին և 4-ին կազմակերպել է վերապատրաստման դասընթաց *«Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը»* թեմայով: Նշված դասընթացով զեկուցողներ են եղել Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ռուբեն Մելիքյանը, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Բալայանը և փաստաբան Հայկ Ալումյանը:

2015 թվականի մարտի 6-ին և 7-ին փաստաբաններ Հայկ Հարությունյանի և Վահե Հովհաննիսյանի կողմից կազմակերպել է վերապատրաստման դասընթաց *«Արբիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման այլ եղանակների արդի հարցերը»* թեմայով:

2015 թվականի հոկտեմբերի 28 -ին և 29-ին նույն նախաձեռնության շրջանակներում Հրայր Ղուկասյանի կողմից իրականացվել է *«ՀՀ քրեական դատավարության արդի հիմնահարցերը»* թեմայով 10 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստման դասընթաց:

➢ ***վերապատրաստման դասընթացներ անցկացնողների հավատարմագրման չափորոշիչների և այլ պահանջների շարունակական կատարելագործում.***

Փաստաբանների պալատում վերապատրաստման դասընթացների դասընթացավարներն ընտրվում են Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված չափանիշներով:

Փաստաբանների պալատի նախագահի 17.03.2014թ. թիվ 113-Լ որոշման թիվ 1 հավելվածով հաստատված է «Փաստաբաններին վերապատրաստող դասավանդողների ընտրության» կ արգն, ըստ որի՝ փաստաբանը կամ այլ

մասնագետը կարող է ընտրվել դասավանդող, եթե՝ 1) ունի լսարանի հետ աշխատելու հմտություններ, 2) ներկայացրել է Պալատի նախագահի հաստատած թեմաներից որևէ մեկի վերաբերյալ դասավանդման առարկայական ծրագիր, և 3) ունի՝

- առնվազն 5 (հինգ) տարվա փաստաբանական գործունեության ստաժ, կամ
- Պալատի կողմից ընդունելի համարվող կազմակերպության կողմից տրված դասընթացավարի վկայագիր, կամ
- գիտական աստիճան, կամ
- համապատասխան ոլորտում իր օգտին կայացված առնվազն 10 (տաս) վերջնական դատական ակտ, կամ
- առնվազն 3 (երեք) տպագրված աշխատանք գիտագործնական խնդիրների շուրջ, կամ
- այլ մասնագիտությունների դեպքում՝ առնվազն դասընթացներ վարելու 5 (հինգ) տարվա փորձ:

Նույն կարգի համաձայն՝ դասավանդողների ընտրությունը կատարում է հատուկ այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ***«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրինագծի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ Հայաստանի Հանրապետության ազգային ժողով.***

Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ դեռևս 2014 թվականի դեկտեմբերին «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար օրինագիծ մշակելու նպատակով ստեղծվել էր աշխատանքային խումբ:

Նշված աշխատանքային խումբը 2015 թվականին մշակել էր ««Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով մի շարք փոփոխություններ և լրացումներ են առաջարկվել գործող օրենքում:

Նախագծով փաստաբանների համար սահմանվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ապացույցներ պահանջելու նոր կարգավորումներ: Մասնավորապես՝ գործող օրենքի 18-րդ հոդվածում սահմանված փաստաբանի հիմնական իրավունքների շարքում նախատեսվել է կարգավորում, համաձայն որի փաստաբանի պահանջով տեղեկություններ տրամադրելու պարտականություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ցանկում պետք է լրացվեն նաև **տնտեսավարող սուբյեկտները**:

Նախագծով առաջարկված մեկ այլ լրացման համաձայն՝ փաստաթղթեր (տեղեկություններ) պահանջելու համար համապատասխան մարմիններին կամ անձանց դիմելիս փաստաբանը պարտավոր չէ բացահայտել ո՛չ փաստաթղթեր պահանջելու նպատակը և ո՛չ էլ իր վստահորդին, այլ բավարար է միայն, որ փաստաբանը դիմումին կցի փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը:

Վերոնշյալ կարգավորումներից բացի, համապատասխան մարմնի կողմից ապացույց (տեղեկություն) չտրամադրելու կամ տրամադրումը մերժելու կամ պահանջվող տեղեկության մեջ գաղտնիք պարունակելու դեպքում փաստաբանը կարող է նաև համապատասխանաբար դիմել վարչական կամ ընդհանուր

իրավասության դատարան ընդդեմ նշված մարմնի՝ փաստաթղթեր (տեղեկություններ) տրամադրելը պարտադրելու պահանջով: Դատարանը փաստաբանի հայցադիմումը քննում է դռնփակ դատաքննության կարգով՝ մեկ ամսյա ժամկետում և կայացնում է որոշում փաստաթղթեր (տեղեկություններ) տրամադրելը պարտադրելու կամ հայցադիմումը մերժելու մասին:

Նախագծով կարգապահական վարույթի շրջանակներում փաստաբանի համար (էլեկտրոնային փոստի հասցե չունենալու կամ բնակության հասցեն փոխելու դեպքում) պատշաճ ծանուցման եղանակ է համարվում նաև Փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցումը հրապարակելը: Տվյալ դեպքում փաստաբանը կհամարվի պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում տեղադրվելու օրվան հաջորդող օրվանից:

Նախագծով փաստաբանական գործունեության կազմակերպական-իրավական նոր ձև է սահմանվել «փաստաբանական գրասենյակ» կազմակերպաիրավական ձևը՝ որպես իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն: Ընդ որում, նախագծով հնարավորություն է տրվելու ստեղծել նաև առևտրային կազմակերպություններ, եթե փաստաբանները ցանկանան իրենց գործունեությունն իրականացնել, որպես ձեռնարկատիրական:

Նախագծով փաստաբանական կազմակերպությունների մասնակիցները (հիմնադիրները) պետք է լինեն միայն փաստաբանները:

Նշված օրենքի նախագիծը քննարկվել է ակումբի նիստում, ինչպես նաև Փաստաբանների պալատի խորհրդի 08.04.2015թ. թիվ 09/11-Լ որոշմամբ արժանացել է հավանության:

Նշված նախագիծը 2015 թվականի հուլիսին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը:

➢ ***Փաստաբանական գործունեությանն առնչվող այլ իրավական ակտերի մասով նախագծերի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ Հայաստանի Հանրապետության ազգային ժողով:***

Փաստաբանների պալատը՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ, իրավական ակտ մշակող մարմիններից ստանում է իրավական ակտերի նախագծեր՝ Փաստաբանների պալատի դիրքորոշումը ներկայացնելու համար:

2015 թվականի ընթացքում Փաստաբանների պալատը իրավական ակտ մշակող մարմիններից ստացել և համապատասխան դիրքորոշում է հայտնել հետևյալ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ՝

1) ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ.

2) «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

3) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

4) «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում» լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

5) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում» լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

6) «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում» լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

7) «Սպառողների պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում» լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

8) ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ.

9) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

10) «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

11) «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

12) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

13) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

14) «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

15) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

16) «Թմրամիջոցներ, հոգեմետ, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելու կամ աճեցնելու, ինչպես նաև այդ գործունեության իրականացման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

17) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի № 1543-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ.

18) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 22-ի № 595-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ.

19) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 6-ի № 731-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ.

20) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի № 574-ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1. Ակումբ.

2015 թվականի ընթացքում Երևան քաղաքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում (Սյունիք, Վայոց ձոր, Լոռի, Շիրակ, Կոտայք և Արարատ) տեղի են ունեցել Փաստաբանների պալատի շուրջ 20 ակումբի նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են «Փաստաբանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի նախագիծը, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հիմնահարցերը, ՄԻԵԴ դիմելու չափորոշիչները, ՀՀ ԱՆ ՔԿՀ-ի աշխատակիցների կողմից փաստաբաններին զննության (խուզարկության) ենթարկելու հարցը, խնամակալության մարմնի կողմից փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու, ինչպես նաև մի շարք այլ թեմաներ:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության նախաձեռնությամբ ակումբին որոշ նիստերի քննարկումներ նաև տեսաձայնագրվել են՝ փաստաբանների առավել լայն շրջանակին հասանելի դարձնելու համար:

2. Մարզամշակութային ակումբ.

Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2015 թվականի ընթացքում փաստաբանների համար կազմակերպել է մարզական միջոցառումներ և արշավներ:

✓ **Ֆուտզալի մրցաշար փաստաբանների միջև.**

2015 թվականի փետրվար ամսին փաստաբանների միջև կազմակերպվեց ֆուտզալի (ֆուտբոլ դահլիճում) մրցաշար, որին մասնակցեցին ավելի քան հիսուն փաստաբան՝ յոթ թիմերով: Մրցաշարին երկու առանձին թիմերով ներկայացված էին նաև Փաստաբանական դպրոցի ունկնդիրները:

Մրցաշարի արդյունքում մրցանակային տեղեր (1-ին, 2-րդ և 3-րդ)

զբաղեցրած թիմերը պարգևատրվեցին Փաստաբանների պալատի ֆուտբոլի առաջնության գավաթներով, իսկ մրցաշարի արդյունքում լավագույն խաղացողներից ձևավորվեց Փաստաբանների պալատի ֆուտզալի թիմը:

✓ ***Արշավներ դեպի Հայաստանի պատմամշակութային վայրեր.***

2015 թվականի ամռան ամիսներին Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը փաստաբանների համար կազմակերպել է նաև արշավներ դեպի Հայաստանի տարբեր պատմամշակութային վայրեր՝ Սևան, Հաղարծին, Գոշավանք և այլ վայրեր:

✓ ***«Առողջ ապրելակերպ» դասընթաց փաստաբանների համար.***

Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2015 թվականի նոյեմբերի 4-ին Հայաստանի ռազմական թաեքվոնդոյի ֆեդերացիայում անցկացրել է «Առողջ ապրելակերպի հիմունքներ» տեսական և գործնական դասընթացը, որի ընթացքում փաստաբաններին ներկայացվեցին առողջ ապրելակերպի տեսական հիմունքները, իսկ համապատասխան որակավորում ունեցող մարզիչները փաստաբաններին սովորեցրեցին ինքնապաշտպանական հմտություններ, մարմնամարզական, ինչպես նաև շնչառական վարժություններ:

3. ***Հանձնախմբեր, հանձնաժողովներ և աշխատանքային այլ խմբեր.***

Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ստեղծված սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը (1-7 գլուխները) հրապարակելուց հետո, կարևորելով փաստաբանության մասնակցությունը սահմանադրական բարեփոխումների իրականացման գործընթացին, **Փաստաբանների պալատի նախագահի 20.07.2015թ. թիվ 206-Լ** **որոշմամբ** ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ մասնագիտական կարծիք ներկայացնող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի աշխատանքային խումբ:

Աշխատանքային խումբը կազմված է եղել Փաստաբանների պալատի նախագահի կողմից նշանակված համակարգողից (Արթուր Հովհաննիսյան) և գիտական աստիճան ունեցող 12 (տասներկու) փաստաբան անդամներից՝

1) փաստաբան, ի.գ.թ. Տիգրան Սաֆարյան (արտոնագիր թիվ 769),
2) փաստաբան, ի.գ.թ. Էմիլ Ամիրխանյան (արտոնագիր թիվ 993),
3) փաստաբան, դոցենտ Արմինե Հարությունյան (արտոնագիր թիվ 1041),
4) փաստաբան, ի.գ.թ. Տարոն Սիմոնյան (արտոնագիր թիվ 1092),
5) փաստաբան, ի.գ.թ. Հունան Տեր-Վարդանյան (արտոնագիր թիվ 1108),
6) փաստաբան, ի.գ.թ. Դավիթ Հունանյան (արտոնագիր թիվ 1217),
7) փաստաբան, ի.գ.թ. Քրիստինա Սարդարյան (արտոնագիր թիվ 1281),
8) փաստաբան, ի.գ.թ. Լևոն Գևորգյան (արտոնագիր թիվ 1407),
9) փաստաբան, ի.գ.թ. Լյուդվիկ Դավթյան (արտոնագիր թիվ 1416),
10) փաստաբան, ի.գ.թ. Արա Խզմալյան (արտոնագիր թիվ 1440),
11) փաստաբան, ի.գ.թ. Տիրայր Վարդազարյան (արտոնագիր թիվ 1543),
12) փաստաբան, ի.գ.դ. Սերյոժա Աբրահամյան (արտոնագիր թիվ 1693):

Աշխատանքային խմբի հիմնական նպատակն է եղել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ Փաստաբանների պալատի մասնագիտական կարծիքի մշակումը և ներկայացումը Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ստեղծված սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին և/կամ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովին:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի ծավալուն լինելը, ինչպես նաև ժամանակի սղությունը՝ աշխատանքային խումբը քննարկել էր միայն նախագծի 1-ին՝ «Սահմանադրական կարգի հիմունքներ», 2-րդ՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները», 7-րդ՝ «Դատարանները և բարձրագույն դատական խորհուրդը» և 8-րդ՝ «Դատախազությունը և քննչական մարմինները» գլուխները և դրանք վերաբերյալ Փաստաբանների պալատի դիրքորոշումն ամփոփել էր աշխատանքային խմբի կողմից 2015 թվականի

օգոստոսի 31-ին հաստատված ավելի քան հարյուր էջ ունեցող **մասնագիտական կարծիքում**:

Աշխատանքային խմբի կարծիքը 2015 թվականի սեպտեմբերի 3-ին Փաստաբանների պալատի կողմից ներկայացվել էր Հայաստանի Հանրապետության ազգային ժողովին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախագահին:

Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների և Փաստաբանների պալատի նախագահի ու աշխատանքային խմբի անդամների մասնակցությամբ քննարկվել է աշխատանքային խմբի կարծիքը:

2015 թվականի հոկտեմբերին Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների վերջնական նախագծում Փաստաբանների պալատի աշխատանքային խմբի կողմից ներկայացված առաջարկների ընդունման կամ մերժման վերաբերյալ **համեմատական տեղեկանքը**, որում ըստ կետերի ներկայացված է համեմատական վերլուծություն աշխատանքային խմբի կողմից արված առաջարկների և դրանք Սահմանադրության նախագծի վերջնական տեքստում ամբողջությամբ կամ մասնակի ընդգրկված լինելու վերաբերյալ:

4. Երիտասարդական խորհուրդ.

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող վեցամսյա ծրագրի շրջանակներում Փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը 2014 թվականի հոկտեմբերից 2015 թվականի մարտ ամիսների ընթացքում հրապարակել է հոդվածների ժողովածու, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է վեց հոդվածներ՝ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ:

2015 թվականի հունվարից մարտ ամիսներին հրապարակվել են հոդվածների երեք ժողովածու:

5. Փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախումբ.

Փաստաբանների պալատի նախագահի 23.06.2015թ. թիվ 176-Լ որոշմամբ հաստատվել է **«Փաստաբանների պալատի արագ արձագանքման**

հանձնախմբի գործունեության մասին» կարգը:

Նշված կարգի համաձայն Փաստաբանների պալատի արագ արձագանքման հանձնախումբը հասարակական հիմունքներով գործող մարմին է, որը՝

ա) արձանագրում է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերը կամ փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունները.

բ) նպաստում է փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն:

Արագ արձագանքման հանձնախմբի գործունեության ընթացքում 2015 թվականին արձանագրվել է **5 դեպք**:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել են հետևյալ դեպքերը՝

1) 23.06.2015 թվականին փաստաբան Ժիրայր Սաֆարյանը բերման էր ենթարկել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի պահպանության բաժնի «Բարեկամություն» մետրոյի բաժանմունք: Դեպքի մասին իրազեկվելուց հետո Փաստաբանների պալատի նախագահը և հանձնախմբի անդամներն այցելել են ոստիկանության նշված բաժանմունք:

2) 23.06.2015 թվականին փաստաբան Ռոբերտ Ռևազյանին չեն թույլատրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժին և թույլ չեն տվել տեսակցել վկայի կարգավիճակ ունեցող իր վստահորդին: Արագ արձագանքման հանձնախմբի, ինչպես նաև ՀՀ ոստիկանության հետ կնքված փոխըմբռնման հուշագրի հիման վրա գործող Փաստաբանների պալատի հանձնախմբի միջամտության արդյունքում խոչընդոտը վերացվել է:

3) 23.06.2015 թվականին փաստաբան Մուրադ Ասր յանին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնում թույլ չեն տվել տեսակցել այնտեղ գտնվող իր վստահորդին: Արագ արձագանքման հանձնախմբի, ինչպես նաև ՀՀ ոստիկանության հետ կնքված փոխըմբռնման հուշագրի հիման վրա գործող Փաստաբանների պալատի հանձնախմբի միջամտության արդյունքում խոչընդոտը վերացվել է:

4) 05.08.2015 թվականի փաստաբան Մխիթար Բեգյանից տեղեկատվություն է ստացվել, որ վերջինիս պաշտպանյալի նկատմամբ կիրառվել է գրավ, սակայն կալանավայրից հրաժարվում են ազատ արձակել անձին՝ պատճառաբանելով, որ համապատասխան ձևակերպումն իրականացնող աշխատակցի աշխատանքային ժամը լրացել է: Արագ արձագանքման հանձնախմբի միջամտությունից հետո փաստաբանի պաշտպանյալն ազատ է արձակվել գիշերը:

5) 05.10.2015 թվականին փաստաբան Տիգրան Եգորյանը բերման է

ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժին, իսկ վերջինիս փաստաբան Լուսինե Հակոբյանին չի թույլատրվել իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով: Միջամտել են արագ արձագանքման հանձնախմբի, ինչպես նաև ՀՀ ոստիկանության հետ կնքված փոխըմբռնման հուշագրի հիման վրա գործող Փաստաբանների պալատի հանձնախմբի անդամները:

6. Փաստաբանների ընդունելությունը պալատում.

2015 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի նախագահն անձամբ ընդունել է **543 փաստաբանի**՝ տարբեր հարցերով (այդ թվում՝ փաստաբանական գործունեության ժամանակ ծագած խնդիրներով, իրավական խնդիրներով, դատավարական հարցերով):

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

➢ Հաղթանակի և խաղաղության տոնը Փաստաբանների պալատում.

Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ Փաստաբանների պալատը կազմակերպել էր Մեծ Հայրենական պատերազմին մասնակցած վետերան-փաստաբանների մեծարման միջոցառում:

Փաստաբանների պալատի վետերան-փաստաբաններ՝ Նարիման Միրզաբեկյանը (92 տարեկան), Մայիս Ավետիսյանը (90 տարեկան) և Հրաչիկ Գոգինյանն (91 տարեկան) այն հազարավոր հայորդիների շարքերում էին, ովքեր ներկայացել են շրջանային զինկոմիսարիատներ ու կամավոր զինվորագրվել հայրենիքի պաշտպանությանը:

Փաստաբանների պալատի անունից վետերաններին հանձնվել են Փաստաբանների պալատի խորհրդանշական կրծքանշաններ և շնորհակալագրեր, ինչպես նաև նկարահանվել է կարճամետրաժ տեսաֆիլմ (7:14 րոպե տևողությամբ), որում վետերանները ներկայացրել են պատերազմի արհավիրքները ու փաստաբան դառնալու ճանապարհը:

➢ Երեխաների պաշտպանության միջազգային օրը Փաստաբանների պալատում.

Փաստաբանների պալատի համար արդեն ավանդական է դարձել երեխաների պաշտպանության միջազգային օրը նշելը:

2015 թվականի հունիսի 1-ին Փաստաբանների պալատը Երևան քաղաքի Կիրովի անվան մանկական զբոսայգում փաստաբանների երեխաների համար կազմակերպել էր երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարք, որի ընթացքում երեխաներին զվարճացրել են ծաղրածուն, մուլտֆիլմերի հերոսները և աճպարարն իր կենդանիների հետ միասին: Միջոցառման ընթացքում երեխաները հնարավորություն ունեցան

կավիճներով նկարել, խաղալ օճառե պղպջակներով, ինչպես նաև կատարել շրջայց այգում գործող գնացքով: Ընթացքում նաև երեխաներին տրվել են մարդու հիմնական իրավունքներին և փաստաբանությանը վերաբերող հարցեր:

➢ Տեսաֆիլմ Փաստաբանների պալատի առաջին նախագահի մասին.

Փաստաբանների պալատի առաջին նախագահ Ռուբեն Սահակյանի ծննդյան օրվա՝ հունիսի 13-ի կապակցությամբ Փաստաբանների պալատի մամուլի ծառայությունը նկարահանել էր տեսաֆիլմ, որում ներկայացված է անվանի փաստաբանի անցած ուղին: Տեսաֆիլմում ներկայացվել է Ռուբեն Սահակյանի կերպարը *«Մարդ, Փաստաբան և Փաստաբանների պալատի նախագահ»* ձևաչափով:

➢ Փաստաբանների պալատը իրազեկումներ է անցկացրել Բաղրամյանի պողոտայում նստացույցին մասնակցող քաղաքացիներին.

2015 թվականի հունիսին էլեկտրաէներգիայի թանկացման կապակցությամբ Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայում քաղաքացիների կողմից իրականացրած նստացույցի մասնակիցների իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու նպատակով Փաստաբանների պալատը իրազեկումներ է անցկացրել՝ քաղաքացիներին բաժանելով նրանց իրավունքների մասին գրականություն, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի և կամավոր կարգով իրենց օգնության պատրաստակամությունը հայտնած փաստաբանների միջոցով, պատրաստակամություն է հայտնել պաշտպանել նստացույցի ընթացքում Բաղրամյան պողոտայից բերման ենթարկվածների իրավունքները ոստիկանությունում և քննչական կոմիտեում տեղի ունեցող վարչական կամ քրեական գործընթացներում:

Միաժամանակ Փաստաբանների պալատը հրապարակել է ակտիվիստներին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու ցանկություն հայտնած

փաստաբանների ցանկը: Ցանկում ներառել են՝

1. Աշոտ Կյուրեղյան
2. Միհրան Աղաբաբյան
3. Մարինե Շահպարոնյան
4. Սարգիս Ցականյան
5. Քրիստինա Գևորկյան
6. Վահագն Մարտիրոսյան
7. Իրինա Հակոբյան
8. Դավիթ Ասատրյան
9. Գարիկ Գալիկյան
10. Հայարփի Սարգսյան
11. Արայիկ Պապիկյան
12. Արմինե Ղասաբողլյան
13. Հրանտ Գևորգյան
14. Արմինե Կարապետյան

Ակտիվիստների կողմից Փաստաբանների պալատին է ուղարկվել շնորհակալագիր փաստաբան **Հայարփի Սարգսյանի** վերաբերյալ:

➢ ***Փաստաբանների պալատն իրականացրել է դատապարտյալներին, ինչպես նաև մարզի բնակիչներին իրավական օգնություն ցույց տալու ծրագիր.***

2015 թվականի հոկտեմբերից դեկտեմբեր ամիսների ընթացքում Փաստաբանների պալատը Եվրոպայի Անվտանգության ու Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի հետ համատեղ իրականացրել է «Աջակցություն արդար դատաքննությանը և դատական իշխանության անկախությանը» ծրագիրը, որի շրջանակներում փաստաբան փորձագետները՝ այցելելով քրեակատարողական հիմնարկներ և Հայաստանի Հանրապետության մարզեր, անվճար իրավական խորհրդատվություն են տրամադրել քաղաքացիներին:

Նշված ծրագրի շրջանակներում կատարվել են 66 այցեր Հայաստանի Հանրապետության 10-ը մարզեր (**ընդհանուր 32 այց**) և 10-ը քրեակատարողական հիմնարկներ (**ընդհանուր 34 այց**):

Ծրագրի շրջանակներում անվճար խորհրդատվություն է տրամադրվել ընդհանուր **235 անձ ի**, որից 143 -ը քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող անձանց, իսկ 92-ը մարզերի բնակիչներին:

Ծրագրի վերջնական արդյունքների վերլուծության ընթացքում պարզվել է, որ մարզերում իրավաբանական խորհրդատվության կարիքն առավել շատ պահանջվել է քաղաքացիական և վարչական իրավունքի տարբեր հարցերով, իսկ քրեակատարողական հիմնարկներում առավել շատ պահանջարկ է եղել քրեաիրավական ուղղությամբ հարցերով:

➢ *Փաստաբանների պալատի կայքէջի այցելությունները*

Փաստաբանների պալատի կայքէջը մշտապես վերազինվում է: Կայքէջերի այցելուների վիճակագրության www.google.am/analytics/ և www.similarweb.com ռեսուրսներում առկա տեղեկատվության վերլուծությունից բխում է, որ 2015 թվականի հունվարից դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատի կայքէջ այցելել են **64.272 օգտատեր** , իսկ նշված օգտատերերի այցերի ընդհանուր քանակը կազմում է **1.130.988 այց**: Ընդ որում՝ նշված 64.272 օգտատերերից 33%-ն կայքի գործարկման պահից սկսած առաջին անգամ են կայք այցելել, իսկ 67% այցելուները երկու և ավելի անգամ:

Վիճակագրական տվյալների ամփոփման www.similarweb.com կայքի ռեսուրսներից պարզ է դառնում, որ Փաստաբանների պալատի կայքէջը հանրային իրավական-տեղեկատվական կայքերի (տվյալ կայքի ցանկում նշված ռեսուրսների սահմաններում) վարկանիշում այցելուների և հանրային հետաքրքրության առումով 3-րդ տեղն է զբաղեցնում է www.court.am և www.arlis.am իրավական տեղեկատվական համակարգի կայքէջերից հետո:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. *Մասնագիտական էթիկային առնչվող հարցերի հրապարակում.*

➢ ***Պալատի խորհրդի կարգապահական որոշումների շարունակական հրապարակում www.advocates.am ինտերնետային կայքի միջոցով.***

Փաստաբանների պալատի կայքէջում **«Խորհրդի որոշումներ կարգապահական գործերով»** («Գրադարան» - «Պալատի իրավական ակտեր») բաժնում շարունակաբար հրապարակվում են կարգապահական գործերով բոլոր որոշումները: Ընդ որում՝ կայքում ներդրված հատուկ ֆիլտրման համակարգի միջոցով կայքն ավտոմատ գեներացնում է տվյալ որոշման հետ փոխկապակցված իրավական ակտերը, օրինակ՝ ըստ իրավական ակտի հասցեատիրոջ (փաստաբանի անվան և ազգանվան), վարքագծի կանոնագրքի համապատասխան կետի, ըստ որոշման եզրափակիչ մասի (կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ վարույթը կարճելու մասին որոշում), տույժի տեսակի և այլն: 2016 թվականի համար ծրագրավոր վում է լրացուցիչ գործիքներով զինել այս բաժինը: Ստորև ներկայացված նկարում կարելի է տեսնել համակարգի ֆիլտրման օրինակը.



➢ ***Վարքագծի հարցերի վերաբերյալ քննարկումների կազմակերպում:***

«Փաստաբանների վերապատրաստման» կարգի համաձայն 36-րդ կետի համաձայն՝ Փաստաբանները յուրաքանչյուր տարի (հունվար-դեկտեմբեր)

առնվազն չորս ժամ պետք է վերապատրաստվեն «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» առարկայի շրջանակներում հաստատված թեմաներով:

Նշված կանոնի կատարում ապահովելու համար փաստաբանների պարտադիր վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը կազմակերպվում են այնպես, որպեսզի յուրաքանչյուր ամիս առնվազն երեք դասընթաց նշանակված լինի «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» թեմայով:

2. Հասարակության հետ կապերի ռազմավարության մշակում

➢ ***Փաստաբանների պալատի կայքէջի շարունակական վերազինում և արդիականացում.***

Փաստաբանների պալատի կայքէջը շարունակաբար վերազինվում է նոր հնարավորություններով:

2015 թվականի ընթացքում կայքում, ինչպես նշվեց վերոնշյալ կետում, ներդրվել է իրավական ակտերի ֆիլտրման համակարգ, որը կարգապահական գործերով խորհրդի որոշումներն ըստ տարբեր չափանիշների ֆիլտրելուց բացի, ավտոմատ կերպով փոխկապակցված իրավական ակտերը արտացոլում է նաև այլ իրավական ակտերի բաժիններում:

Օրինակ՝ ստորև, նկարում ներկայացված տարբերակում «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» կարգում լրացում կատարելու մասին Փաստաբանների պալատի խորհրդի 16.10.2014թ. որոշման էջում որպես փոխկապակցված իրավական ակտ ներկայացված է «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգը հաստատելու հարցը քննարկելու մասին»՝ Փաստաբանների պալատի խորհրդի 15.01.2014թ. որոշումը, ինչպես նաև «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթ անցկացնելու մասին»՝ Փաստաբանների պալատի նախագահի 20.11.2015թ. որոշումը:





Փաստաբանների պալատի կայքէջում 2015 թվականին կատարված նորամուծություններից է «Գրասենյակներ» բաժնի ստեղծումը, որտեղ փաստաբանական գրասենյակները հնարավորություն ունեն տեղադրելու իրենց կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները: Նշված բաժնում փաստաբանական գրասենյակների մասին տեղեկատվությունը հրապարակվում է այբբենական կարգով:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

- ***Միջազգային համագործակցության դաշտի ընդլայնում՝ նոր գործընկերների հետ համագործակցության հարաբերությունների հաստատման միջոցով.***
- ***Գործընկեր կառույցների հետ փաստաբանական ինստիտուտի զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացում.***
- ***Փաստաբանական ինստիտուտի վերաբերող տարաբնույթ թեմաներով համաժողովների, կոնֆերանսների, սեմինար-քննարկումների և այլ միջոցառումների նախաձեռնում.***
- ***Օտարերկրյա գործընկերների հետ հանդիպումների կազմակերպում, այդ թվում՝ նրանց հրավերով:***

* * *

✓ ***Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 100-րդ տարելիցի կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատն ընդունել է փաստաբանական միջազգային հանրության պատվիրակություններ.***

2015 թվականի ապրիլի 24-ին և 25-ին Փաստաբանների պալատում տեղի են ունեցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շարք, որոնց մասնակից են դարձվել փաստաբանական միջազգային հանրության մոտ 35 ներկայացուցիչներ՝ այդ թվում Ֆրանսիայի Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Բուլղարիայի Հանրապետությունից, Հունաստանի Հանրապետությունից, ինչպես նաև փաստաբանական միջազգային տարբեր կառույցներից:

Միջոցառումների շրջանակներում կազմակերպվել է գիտաժողով նվիրված հայոց ցեղասպանության ճանաչմանը, ինչպես նաև մասնակիցները այցելել են ցեղասպանության զոհերի հուշահամալիր:

Հյուրերի թվում էին՝ Փարիզի փաստաբանների պալատի նախագահ՝ Պիեռ Օլիվիե Սյուրը, Փարիզի փաստաբանների պալատի նախկին նախագահ՝ Քրիստիան Ֆերալ Շուլը, Մոնպելյեյի փաստաբանների միության նախկին նախագահ՝ Լյուք Քիրքյաչարյանը, Փաստաբանների միջազգային միության պատվավոր նախագահ՝ Պոլ Նեմոն, Ֆրանսիայի փաստաբանական համայնքների ազգային խորհրդի անդամներ՝ Վենսան Նիորեն և Ալեն Մարտերը, Սոֆիայի փաստաբանների միության փաստաբան Սիլվի Գավրիլովը, Հունաստանի փաստաբանական համայնքի ներկայացուցիչ՝ Աննա Սաակիդուն, Ռուսաստանի Դաշնության փաստաբանների դաշնային միության փոխնախագահ՝ Վլադիսլավ Գրիբը, Ֆրանսիայի Կառպաների ազգային միության փոխնախագահ Բեռնար Բուլիուն, Ֆրանս-հայկական փաստաբանների և իրավաբանների միության անդամներ և այլն:

Փարիզի փաստաբանների պալատի կողմից Արա Զոհրաբյանին է շնորհվել Փարիզի փաստաբանների պալատի պատվավոր անդամի կոչումը:

* * *

✓ ***Փաստաբանների պալատի, Ամերիկյան իրավունքի դպրոցի և Փաստաբանական դպրոցի միջև ստորագրվել է եռակողմ համագործակցության հուշագիր.***

S | A | L
School of American Law
for Armenia

Ամերիկյան իրավունքի դպրոցը հանդիսանում է ԱՄՆ Իլլինոյս նահանգի Տեխնոլոգիայի ինստիտուտի Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջի կողմից Վրաստանի Թբիլիսի քաղաքում հիմնադրված Կովկասում Ամերիկյան իրավունքի դպրոցի պաշտոնական գործընկերը և Հայաստանում որպես հատուկ օտարերկրյա ծրագիր իրականացնում է Չիկագո-Քենթի իրավաբանական քոլեջի կողմից հավատարմագրված իրավաբանական կրթական աստիճանի ծրագիրը,

որի նպատակն է ապահովել Հայաստանի իրավաբանների մուտքը ամերիկյան իրավաբանական կրթության բնագավառ:

2015 թվականի ապրիլի 21 -ին Փաստաբանների պալատի, Ամերիկյան իրավունքի դպրոցի և Փաստաբանական դպրոցի միջև ստորագրվել է եռակողմ համագործակցության հուշագիր, որի շրջանակներում ծրագրին դիմած փաստաբանները և/կամ Փաստաբանական դպրոցի ունկնդիրներն ունեն ուսուցման վճարի զեղչման հնարավորություն:

* * *

✓ ***ՀՀ փաստաբանների պալատն ընդունել է Մոսկվայի փաստաբանների պալատի պատվիրակությանը.***

2015 թվականի մայիսի 5-ին Փաստաբանների պալատում հյուրընկալվել են Մոսկվայի փաստաբանների պալատի պատվիրակությունը՝ պալատի առաջին փոխնախագահ Հենրի Ռեզնիկի գլխավորությամբ, ում ուղեկցում էին Մոսկվայի փաստաբանների պալատի փաստաբան, որակավորման հանձնաժողովի անդամ Նիկոլայ Կիպնիսը և Մոսկվայի փաստաբանների պալատի փաստաբան Յուրի Չանչուրյանը:

Հենրի Ռեզնիկը բարձր է գնահատել հայ փաստաբանների միասնականությունը և հայտնել, որ Ռուսաստանում այդ հարցը կազմակերպելը բավականին բարդ է, քանի որ միայն Մոսկվա քաղաքում գործում է 9000 փաստաբան:

Հենրի Ռեզնիկի գլխավորած պատվիրակությունը շրջայց է կատարել Փաստաբանների պալատում՝ ծանոթացել ՀՀ փաստաբանական դպրոցի և Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքներին:

Հանդիպման ժամանակ քննարկվել են փաստաբանական գործունեությանն առնչվող հարցեր, այդ թվում՝ փաստաբանական գաղտնիքի և հանրային պաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունները, անդրադարձ է կատարվել նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանին տույժի ենթարկելու ինստիտուտին:

Ռուս փաստաբանների պատվիրակությունը բարձր է գնահատել Հայաստանում հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացվածության մակարդակը:

* * *

✓ ***ՀՀ փաստաբանների պալատի պատվիրակությունը մասնակցել է Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE) պլենար նիստին.***

2015 թվականի մայիսի 29-ին, Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE) 123-րդ հերթական պլենար նիստին մասնակցելու համար CCBE նախագահ Մարիա Սլազակի հրավերով ՀՀ փաստաբանների պալատի պատվիրակությունն այցելել է Լեհաստանի Հանրապետության Գդանսկ քաղաք:

Պլենար նիստի 1-ին օրվա ընթացքում հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների պալատի, CCBE և Չեխիայի Հանրապետության փաստաբանների պալատի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրումը, որով կողմերը պատրաստակամություն են հայտնել համագործակցել միմյանց հետ փաստաբանության ոլորտում: Հուշագրով չեխ գործընկերներն իրենց աջակցությունն են ցուցաբերելու CCBE հետագա աշխատանքներին Հայաստանի փաստաբանների պալատի արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար: Հուշագրի վրա իր խորհրդանշական ստորագրություն է թողել նաև Լեհաստանի նախկին նախագահ պարոն Լեխ Վալեսան:

* * *

✓ ***Հայաստանի Հանրապետության փաստաբաններն այսուհետ հնարավորություն ունեն ստանալու Անգլիայի և Ուելսի փաստաբանի արտոնագիր.***

ՀՀ փաստաբանների պալատի անդամները իրենց ուսումնառության և գիտելիքների շնորհիվ, այսուհետ իրավունք ունեն մասնակցելու Անգլիայի փաստաբանների որակավորման քննություններին և ստանալու Անգլիայի և Ուելսի փաստաբանի (Solicitor) արտոնագիր:

Անգլիայի և Ուելսի փաստաբանների կարգավորող մարմինը (Solicitors Regulation Authority)Հայաստանի Հանրապետությանը և ՀՀ փաստաբանների պալատին 2015 թվականի օգոստոսի 11-ին ընդգրկել է *«ճանաչված իրավազորությունների»* ցանկում, որը հնարավորություն է տալիս կարգավորող մարմնի կողմից իրականացվող QLTS (Qualified Lawyers Transfer Scheme) ծրագրի միջոցով ՀՀ փաստաբաններին մասնակցել Անգլիայում համապատասխան որակավորման քննություններին և ստանալ Անգլիայի և Ուելսի փաստաբանի (Solicitor) արտոնագիր:

Ծրագիրը նախատեսում է 2 որակավորման քննություն, որոնք դիմորդները պետք է հանձնեն՝ 1. *թեստային եղանակով* (Multiple Choice Test (MCT)) 2. *գործնական*՝ (Objective Structured Clinical Examination (OSCE):

* * *

✓ ***Փաստաբանների պալատն ընդունել է Փաստաբանների միջազգային միության (համագործակցության) Սիբիրյան դաշնային մասնաճյուղի պատվիրակությանը.***

2015 թվականի հոկտեմբերի 16-ին ՀՀ փաստաբանների պալատն ընդունել է Փաստաբանների միջազգային միության (համագործակցության) Սիբիրյան դաշնային մասնաճյուղի պատվիրակությանը:

Փաստաբանների միջազգային միության (համագործակցության) Սիբիրյան դաշնային մասնաճյուղի նախագահ Սերգեյ Վլասովը, լսելով ՀՀ փաստաբանների պալատի ձեռքբերումների ու խնդիրների մասին, կարևորել է փորձի փոխանակումը:

Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը ռուս գործընկերներին ներկայացրել է Հայաստանում Փաստաբանության զարգացման պատմությունը և զարգացման ուղիները: Սերգեյ Վլասովի խնդրանքով Արթուր Հովհաննիսյանը ներկայացրել է այն

հիմնահարցերը, որոնք այսօր առկա են փաստաբանության առջև: Նշվել է պետական կառույցների հետ աշխատանքում առկա դժվարությունները, փաստաբանների անկախության նկատմամբ ոտնձգությունները, քննարկվել են դրանց լուծման ուղիները:

Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը ներկայացրել է դպրոց ընդունվելու կարգը, ուսուցման պրոցեսը, ինչպես նաև որակավորման քննություններ հանձնելու կարգը: Դպրոցի տնօրենը հայտնել է, որ ուսումնական ծրագիրը կազմելիս օգտվել են Ֆրանսիական Փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրից և հարմարեցրել են հայկական օրենքներին:

Վերջինս հայտնել է, որ Դպրոցը գտնվում է հիմնադրամի կարգավիճակում, իսկ հիմնադիրը փաստաբաններն են և այն ղեկավարվում խորհրդի 6 անդամների կողմից, որոնցից մեկը պարտադիր լինում է Արդարադատության նախարարության ներկայացուցիչ (հիմնականում լինում է նախարարի տեղակալը):

Նշվել նաև, որ օրենսդրորեն հաստատված է այն, որ յուրաքանչյուր անձ, ով ցանկանում է դառնալ փաստաբան, պարտավոր է ավարտել Փաստաբանական դպրոցը և հանձնել որակավորման քննությունները, որից հետո Փաստաբանների պալատի խորհուրդը շնորհում է փաստաբանական գործունեության արտոնագիրը:

* * *

✓ ***ՀՀ փաստաբանների պալատի պատվիրակությունը մասնակցել է Վրաստանի Հանրապետության փաստաբանների միության տասնամյակին նվիրված միջոցառմանը.***

2015 թվականի նոյեմբերի 7 -ից 9-ը Փաստաբանների պալատի պատվիրակությունը Թբիլիսի քաղաքում մասնակցել է Վրաստանի փաստաբանների միության 10-ամյակին նվիրված միջոցառմանը:

Նշված միջոցառմանը մասնակցում էին մի շարք փաստաբանական համայնքների ղեկավարներ, որոնք քննարկել են

փաստաբանական համայնքների զարգացմանն ուղղված համատեղ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Նշված քննարկման շրջանակներում հավանության արժանացավ Փաստաբանների պալատի առաջարկն այն, որ անհրաժեշտ է պետությունների փաստաբանական համայնքների միջև համատեղ համագործակցող փաստաբանների ցանկ՝ տեղեկատվական ռեեստր ստեղծել և այդ ցանկը փոխադարձաբար հրապարակել փաստաբանական միությունների պաշտոնական կայքէջերում, որի միջոցով գործընկեր պետության փաստաբանն անհրաժեշտության դեպքում հնարավորություն կունենա գտնելու գործընկեր պետության այն փաստաբանների մասին անհրաժեշտ տեղեկություններ, որոնք պատրաստ են համագործակցել համատեղ գործեր վարելու առումով:

Նշված առաջարկի հիմքում դրվել է Փաստաբանների պալատի և Վրաստանի փաստաբանների միության հետ առկա հաջողված փորձը, երբ վրացի փաստաբանին Հայաստանի Հանրապետությունում Փաստաբանների պալատը օժանդակություն է ցուցաբերել քրեական գործին Հայաստանի փաստաբանի մասնակցությամբ և մամուլի ասուլիս կազմակերպելու միջոցով, նույնը նաև հայ փաստաբանին Վրաստանի փաստաբանների միությունը օժանդակել է Վրաստանի փաստաբանի մասնակցությամբ:

* * *

✓ ***Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համագործակցության շրջանակներում Փաստրաբանների պալատն ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության փաստաբանների պալատի ներկայացուցիչներին.***

2015 թվականի դեկտեմբերի 9 -ին և 10-ին Փաստաբանների պալատում հյուրընկալվել էին Գերմանիայի Դաշնային Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը, որի կազմում էին ԳԴՀ փաստաբանների պալատի գործադիր տնօրեն Վերոնիկա Հորերը, ԳԴՀ փաստաբանների պալատի իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ, Համբուրգի փաստաբանների պալատի նախագահ, քրեական գործերով պաշտպան Օտմար Քուրին, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի Հարավկովկասյան ծրագրերի ղեկավար Ֆրանցիսկա Զիմոնը և նույն կազմակերպության Հայաստանյան ծրագրերի համակարգող Նելլի Թումասյանը:

ԳԴՀ փաստաբանների պալատի գործադիր տնօրեն Վերոնիկա Հորերը Գերմանիայի 165.000 փաստաբանների անունից ողջունել է փաստաբանների պալատի ներկայացուցիչներին

2015 թվականին դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած հանդիպման ընթացքում գերմանացի գործընկերների հետ քննարկվել են Գերմանիայում տարածաշրջանային և դաշնային փաստաբանների պալատների դերը և կառուցվածքը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, երկու երկրներում փաստաբանների մասնագիտական պարտականությունները և դրանց խախտման համար պատասխանատվության հիմնահարցերը, իսկ դեկտեմբերի 10-ին ԳԴՀ փաստաբանների պալատի իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ, Համբուրգի փաստաբանների պալատի նախագահ, քրեական գործերով պաշտպան Օտմար Քուրին հայ փաստաբանների համար անցկացրեց վերապատրաստման դասընթաց՝ «Պաշտպանի դերը նախաքննության և դատաքննության ընթացքում» թեմայով:

* * *

✓ ***Հայ փաստաբանը նշանակվել է փաստաբանների միջազգային միության նախագահի խորհրդական.***

2015 թվականին Փաստաբանների Միջազգային Միության (Union Internationale des Avocats, նստավայրը՝ Փարիզ) տնօրենների կոմիտեի որոշմամբ Փաստաբանների պալատի նախագահի միջազգային հարաբերությունների գծով խորհրդական, Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանը նշանակվել է այդ միության նախագահի խորհրդական:

Միությունը հիմնադրվել է 1927 թվականին և աշխարհում ամենահին կառույցն է իր տեսակի մեջ: Ներկայումս միությանը անդամակցում են շուրջ 2.000

անհատ փաստաբաններ և շուրջ 110 պետություններ ներկայացնող 200 փաստաբանական միություններ և ասոցիացիաներ: 1971 թվականից վեր միությունը հատուկ խորհրդատվական կարգավիճակ ունի ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդում:

2013թ. դեկտեմբեր ամսից նշված միությանն է անդամակցում նաև Փաստաբանների պալատը:

* * *

✓ ***Հայաստանի ֆրանկոֆոն փաստաբանները հնարավորություն ունեն ուսուցում անցնելու Փարիզի փաստաբանական դպրոցում.***

Փարիզի փաստաբանների պալատի նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի Հայաստանի ֆրանկոֆոն փաստաբաններից երկուսը մրցութային կարգով հնարավորություն են ստանում մասնակցել Փարիզի փաստաբանների պալատի կողմից կազմակերպվող «Միջազգային ստաժ» կրթական ծրագրին

Նշված ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր պետության փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ՝ ըստ տվյալ պետության համար հատկացված քվոտաների քանակի (Հայաստանի համար հատկացված է երկու տեղ), հնարավորություն ունեն մասնակցելու երկամսյա կրթական ծրագրին, որի շրջանակներում ծրագրին մասնակցող փաստաբանը մեկ ամիս տեսական ուսուցում է անցնում Փարիզի փաստաբանական դպրոցում իրավունքի ոլորտի տարբեր դասընթացների վերաբերյալ, իսկ հաջորդ մեկ ամսվա ընթացքում՝ անցնում է գործնական պրակտիկա՝ Փարիզի փաստաբանական գրասենյակներում:

2015 թվականի նույնպես Փաստաբանների պալատը ներկայացված է եղել այդ ծրագրին, որին մասնակցելու համար հայտարարված մրցույթը հաղթահարել և դասընթացներին մասնակցել է **փաստաբան Լիանա Մանուսաջյանը**:

Նշված ծրագրին օժանդակել է բարերար Ռայմոնդ Եզեգելյանը:

* * *

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

* * *

✓ Փաստաբանների պալատը համագործակցության հուշագիր է ստորագրել «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ հետ.

2015 թվականի փետրվարի 19-ին Փաստաբանների պալատը հյուրընկալել էր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արտաշես Ջավադյանին:

Այցի ընթացքում Արտաշես Ջավադյանը շրջայց է կատարել Փաստաբաններ պալատում, Փաստաբանական դպրոցում և Հանրային պաշտպանի գրասենյակում:



Նշված հանդիպման ընթացքում ձեռքբերված պայմանավորվածության համաձայն 2015 թվականի փետրվարի 25-ին երկու կառույցների միջև Փաստաբանների պալատում ստորագրվել է **համագործակցության հուշագիր**:

Համագործակցության շրջանակներում Փորձաքննությունների ազգային բյուրոն պատրաստակամություն է հայտնել փաստաբանների համար ապահովել վերջիններիս կողմից վարվող քաղաքացիական, վարչական և քրեական գործերի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով անհրաժեշտ և բյուրոյի կողմից իրականացվող փորձաքննությունների (հետազոտությունների, տեխնիկական փորձարկումների, վերլուծությունների) կատարումը պայմանագրային հիմունքներով (անկախ դատարանի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան փորձաքննություն նշանակված լինելու հանգամանքից):

Վերոնշյալից բացի հուշագրի կողմերը պատրաստակամություն են հայտնել համագործակցել նաև երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող իրավաբանական, ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացման,

գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման, գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման և գիտակրթական բնույթի այլ համատեղ միջոցառումների իրականացման ուղղությամբ:

* * *

✓ Փաստաբանների պալատը համագործակցության հուշագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ.

2015 թվականի մայիսի 21 -ին ՀՀ նոտարական պալատի դահլիճում Փաստաբանների պալատի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջև ստորագրվել է **համագործակցության հուշագիր**:

Հուշագրի ստորագրումը նպատակ է հետապնդել ապահովել փոխադարձ համագործակցության շրջանակին, խթանել կողմերի միջև գործակցությունն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Հուշագրով նախատեսվել է կողմերի համագործակցության այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝ փաստաբանական գործունեության և մարդու իրավունքների բնագավառին առնչվող՝ Արդարադատության նախարարության կողմից մշակվող, ինչպես նաև իրավական փորձաքննության և պետական փորձագիտական եզրակացություն ստանալու համար նախարարություն ուղարկվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Փաստաբանների պալատի կարծիքը ներկայացնելը, նախարարության համակարգում Փաստաբանական դպրոցի ունկնդիրների կամ շրջանավարտների համապատասխան պրակտիկայի կազմակերպելը, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով համատեղ քննարկումներ և խորհրդակցություններ կազմակերպելը, փաստաբանական գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ վերլուծական, վիճակագրական և այլ նյութերի մշակելը, ինչպես նաև օրենսդրական և այլ բնույթի առաջարկությունների ներկայացնելը և այլ ուղղություններ:

* * *

✓ Փաստաբանների պալատի և «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր.

2015 թվականի դեկտեմբերի 1-ին Փաստաբանների պալատի և «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության միջև ստորագրվել է համագործակցության մասին փոխըմբռնման **հուշագիր**, որով կողմերը կարևորել են ազատամարտիկների, հաշմանդամ ազատամարտիկների և նրանց ընտանիքի անդամների քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ապահովման, ինչպես նաև ռազմահայրենասիրական ոգով դաստիարակվող երիտասարդների իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացման անհրաժեշտությունը:

Հուշագրի ստորագրման արարողությունն ուղեկցվել է պատանի երկրապահների հանդիսավոր քայլերթով:

Հուշագրով կողմերը պատրաստակամություն են հայտնել համատեղ մշակել և իրականացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող իրավական կամ այլ թեմաների վերաբերյալ ծրագրեր և դասընթացներ (սեմինարներ), պալատի և միության անդամների համար կազմակերպել համատեղ մարզական, մշակութային միջոցառումներ, մրցաշարեր և այլն:

Հուշագրով Փաստաբանների պալատը պատրաստակամություն է հայտնել յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ իր աշխատակազմի և կամավոր փաստաբանների միջոցով միության անդամների, ազատամարտիկների և նրանց ընտանիքի անդամների համար կազմակերպել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հուշագրի կնքումից հետո 2015 թվականի դեկտեմբեր ամսին երեք ազատամարտիկ դիմել են Փաստաբանների պալատին և իրավական օգնությունն են ստացել:



* * *

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ

* * *

➢ ***Արդարադատության ակադեմիայի ունկնդիրներն այցելել են Փաստաբանների պալատ***

2015 թվականի հոկտեմբերի 23-ին Արդարադատության ակադեմիայի ունկնդիրները, ռեկտոր Ռուբեն Մելիքյանի գլխավորությամբ հյուրընկալվել են Փաստաբանների պալատում:

Ապագա դատավորներն ու դատախազները Փաստաբանների պալատում ծանոթացել են մրցակցային դատավարության կողմերից մեկի՝ փաստաբանների և, մասնավորապես հանրային պաշտպանի աշխատանքներին:

Արդարադատության ակադեմիայի ունկնդիրները շրջայց են կատարել Փաստաբանների պալատում, Հանրային պաշտպանի գրասենյակում և Փաստաբանական դպրոցում: Հանրային պաշտպանի գրասենյակում ունկնդիրներին ներկայացվել է հանրային պաշտպան գործունեությունը, իսկ Փաստաբանական դպրոցում ունկնդիրները ծանոթացել են Փաստաբանական դպրոց ընդունվելու և ավարտելու կարգին և ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

* * *

➢ ***«Անանիա Շիրակացի» վարժարանի աշակերտները հյուրընկալվել են Փաստաբանների պալատում.***

2015 թվականի հոկտեմբերի 30-ին «Անանիա Շիրակացի» վարժարանի ավարտական դասարանների աշակերտներն այցելել են Փաստաբանների պալատ:

Աշակերտները շրջայց են կատարել Փաստաբանների պալատում, Հանրային պաշտպանի գրասենյակում և Փաստաբանական դպրոցում:

Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանն աշակերտներին ներկայացրել է

Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքի և Փաստաբանական դպրոց ընդունվելու ու ավարտելու կարգը և պայմանները:

* * *

➢ ***Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի ունկնդիրներն այցելել են Փաստաբանների պալատ.***

2015 թվականի նոյեմբերի 4-ին Փաստաբանների պալատ են այցելել Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի ունկնդիրները: Նրանք Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանի ուղեկցությամբ շրջայց են կատարել Փաստաբանների պալատի շենքում, եղել են Հանրային պաշտպանի գրասենյակում, որի ղեկավար Մելանյա Առուստամյանը ներկայացրել է գրասենյակի գործունեությունը: Փաստաբանական դպրոցի փոխտնօրեն Ռոման Ահարոնյանը ծանոթացրել է դպրոցի աշխատանքներին:

Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի ունկնդիրները հանդիպել են նաև Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին: Վերջինս ունկնդիրներին ներկայացրել է Փաստաբանական դպրոց ընդունելության և փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու ընթացակարգը:

Հանդիպման ընթացքում երիտասարդ առաջնորդները հետաքրքրվել են Փաստաբանների պալատի ընդհանուր գործունեությունից ու փաստաբանական համայնքի խնդիրներից:

➢ ***ՀՀ արդարադատության նախարարն այցելել է Փաստաբանների պալատ.***

2015 թվականի նոյեմբերի 13 -ին Փաստաբանների պալատում հյուրընկալվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը: Արդարադատության նախարարը նշել է, որ երկու կառույցների միջև

համագործակցությունը խորացնելու նպատակով առաջիկայում նոր հուշագիր կստորագրվի, որի արդյունքում առկա փոխգործակցությունը կմտնի որակապես նոր փուլ:

Նախարարն ընդգծել է, որ փաստաբանական համայնքը Հայաստանի ամենակայացած մասնագիտական կառույցներից մեկն է և նշել է, որ Փաստաբանների պալատն այսօր հայտ է ներկայացում լրջագույն դերակատարում ստանձնելու Հայաստանում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության երաշխավորման գործում:

* * *

➢ ***Փաստաբանների պալատը հյուրընկալել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին.***

Փաստաբանների պալատում 2015 թվականի նոյեմբերի 20-ին, հյուրընկալվել են Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերի շուրջ 70 ուսանողներ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնած հանդիպման նպատակն էր ծանոթանալ փաստաբանի և Փաստաբանների պալատի գործունեությանը:

ԵՊՀ ուսանողները շրջայց են կատարել Հանրային պաշտպանի գրասենյակում: ՀՊԳ ղեկավար Մելանյա Առուստամյանը ներկայացրել է Հանրային պաշտպանի գործունեության մանրամասները և գրասենյակի աշխատանքը:

Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը Փաստաբանական դպրոցում ներկայացրել է ընդունելության և ուսուցման ընթացակարգերը, մանրամասնել այն փաստաթղթերի ցանկը և այն կարգավիճակը, որ պետք է ունենա քաղաքացին Փաստաբանական դպրոց դիմելու իրավունք ստանալու համար:

Փաստաբանների պալատում աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանը ներկայացրել է Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի դահլիճում Պալատի խորհրդի աշխատանքը:

* * *

➢ ***Հայաստանի բանկերի միության ներկայացուցիչներն այցելել են Փաստաբանների պալատ.***

Փաստաբանների պալատում 2015 թվականի դեկտեմբերի 22-ին տեղի է ունեցել Հայաստանի բանկերի միության ներկայացուցիչների հետ հանդիպում ՝ ի դեմս նախագահ Սամվել Ճզմաչյանի և նախագահի տեղակալ Սեյրան Սարգսյանի: Հանդիպմանը մասնակցել է նաև փաստաբան Հայկ Հովհաննիսյանը:

Կողմերը քննարկել են արբիտրաժի ինստիտուտի կայացման և դրանից օգտվելու մշակույթ ձևավորելուն ուղղված հիմնահարցերը:

Փաստաբանների պալատի նախագահը նշել է, որ վեճերի լուծման այլընտրանքային միջոց՝ արբիտրաժի կայացումը շատ կարևոր է փաստաբանական համայնքի համար, քանի որ բացի վեճերն արագ և արդյունավետ լուծելու դրական կողմից, փաստաբանները կարող են լինել ինչպես պրոֆեսիոնալ արբիտրներ, այնպես էլ կողմերի ներկայացուցիչներ:

Հանդիպման ավարտին՝ Բանկերի միության ներկայացուցիչները շրջայց են կատարել Փաստաբանների պալատի շենքում և ծանոթացել Փաստաբանական դպրոցի ու Հանրային պաշտպանի գրասենյակի հնարավորություններին:

* * *

Հավելված թիվ 1
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2015թ. հաշվետվության

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հաշվետու ժամանակահատվածը՝
2015 թվականի հունվարից – դեկտեմբեր ամիսներ

№	1.		2.		3.
	Փաստաբանների դեմ մուտքագրված ընդհանուր բողոքները, այդ թվում՝	***216***	***Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ, այդ թվում՝***	***39***	***1 և 2 այունակների համեմատական 18.06%***
1.1	փաստաբանների վստահորդների և քաղաքացիների բողոքներ	**162**	փաստաբանների վստահորդների և քաղաքացիների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**18**	**11.11%**
1.2	փաստաբանների բողոքներ փաստաբանների դեմ	**14**	փաստաբանների բողոքների հիման վրա փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթներ	**8**	**57.14%**
1.3	դատական սանկցիաներ	**7**	դատական սանկցիաների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**7**	**100%**
1.4	այլ բողոքներ	**33**	այլ բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ	**7**	**18.06%**

2015 թվականի հունվարից դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատում մուտքագրվել են փաստաբանների դեմ ներկայացված 216 բողոք, որոնցից գերակշիռ մասը՝ 162 բողոք ներկայացվել են քաղաքացիների կողմից, որոնք հանդիսանում են տվյալ փաստաբանի վստահորդ (այդ թվում՝ նախկին վստահորդ) կամ փաստաբանի վստահորդի հակառակորդ կողմ:

Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների և փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումների ընդհանուր վիճակագրական թվերի համեմատական վերլուծության արդյունքում պարզվում է, որ փաստաբանների դեմ ներկայացված ընդհանուր 216 բողոքներից կարգապահական վարույթ հարուցվել է ընդամենը 39 բողոքի, այսինքն՝ բողոքների ընդհանուր թվի 18%-ի հիման վրա:

Հաշվետու ժամանակահատվածում փաստաբանների դեմ ներկայացված բողոքների վիճակագրության տոկոսային հարաբերակցությունը կարելի է տեսնել ստորև ներկայացված գծապատկերում:



№	Փաստաբանների նկատմամբ 2015 թվականին հարուցված վարույթներ (քանակ)	178
1.	Փաստաբանների վստահորդների, քաղաքացիների, փաստաբանների բողոքների, ինչպես նաև դատական սանկցիաների հիման վրա հարուցված վարույթների թիվը	39
2.	Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը	92
3.	Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը	47

2015 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի խորհրդի կողմից քննված* և ավարտված գործերի վիճակագրություն				
Քննված կարգապահական գործերի ընդհանուր քանակը՝ 208				
Կարճված վարույթներ՝ 100			Կարգապահական փույժով ավարտված վարույթներ՝ 108	
Այդ թվում՝			Այդ թվում՝	
Բողոքի (սանկցիայի) հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 55, որից				
Բողոքի հիմքով հարուցված վարույթի կարճում	28		Բողոքի հիմքով հարուցված վարույթով փույժի որոշում	27
Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 119, որից				
Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված վարույթի կարճում**	43		Անդամավճարը չվճարելու հիմքով փույժի որոշում	76
Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 34, որից				
Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված վարույթի կարճում***	29		Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով փույժի որոշում	5

* 2015 թվականին քննվել են կարգապահական գործեր, որոնք հարուցվել են 2014թ. երկրորդ կիսամյակում.

** կարճվել են արտոնություն կիրառելու հիմքով (առաջին անգամ հարուցված վարույթի ժամանակ փաստաբանի կողմից անդամավճարն ամբողջությամբ վճարվելու դեպքում վարույթը կարճվում է).

*** կարճվել են արտոնություն կիրառելու հիմքով (առաջին անգամ հարուցված վարույթի ժամանակ փաստաբանի կողմից դասընթացը հաջորդ կիսամյակ իր հաշվին անցնելու դիմում ներկայացնելու դեպքում վարույթը կարճվում է):

* * *

Հավելված թիվ 2
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2015թ. հաշվետվության

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատական ժամանակահատված՝ 2014 և 2015 թվականներ

№	Վիճակագրական տվյալի չափանիշը (համեմատության առարկան)	2014	2015	տարբերությունը թվային արտահայտմամբ	տարբերությունը տոկոսային արտահայտմամբ
1	Փաստաբանների պալատի նախագահի որոշումների ընդհանուր թիվը	432	376	**-56**	**-12.96%**
2	Փաստաբանների պալատի նախագահի հրամանների թիվը	218	262	**44**	**20.18%**
3	կարգեր կամ այլ իրավական ակտեր հաստատելու (այդ թվում՝ փոփոխություն կամ լրացում կատարելու) վերաբերյալ հրամանների թիվը	15	16	**1**	**6.67%**
4	աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված հրամանների թիվը	196	244	**48**	**24.49%**

* * *

Հավելված թիվ 3
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2015թ. հաշվետվության

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատական ժամանակահատված՝ 2014 և 2015 թվականներ

№	Վիճակագրական փվյալի չափանիշը (համեմատության առարկան)	2014	2015	տարբերությունը թվային արտահայտմամբ	տարբերությունը տոկոսային արտահայտմամբ
1	Մտից (մուտքագրված) փաստաթղթերի ընդհանուր թիվը	1957	2589	**632**	**32.29%**
2	Ելից (ելքագրված) փաստաթղթերի ընդհանուր թիվը	1786	2163	**377**	**21,11%**

* * *

Հավելված թիվ 4
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2015թ. հաշվետվության

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

համեմատական ժամանակահատված՝ 2014 և 2015 թվականներ

№	Վիճակագրական փվյալի չափանիշը (համեմատության առարկան)	2014	2015	տարբերությունը թվային արտահայտմամբ	տարբերությունը տոկոսային արտահայտմամբ
Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի և որոշումների վիճակագրություն					
1	Խորհրդի ընթացիկ նիստերի քանակը	37	34	**-3**	**-8.11%**
2	Ընթացիկ նիստերով խորհրդի կողմից քննված օրակարգային հարցերի ընդհանուր քանակը	282	256	**-26**	**-9.22%**
3	Ընթացիկ նիստերով խորհրդի որոշումների ընդհանուր քանակը *	280	255	**-25**	**-8,93%**
4	Խորհրդի կարգապահական նիստերի քանակը	207	354	**147**	**71.01%**
5	Կարգապահական գործերով խորհրդի որոշումների ընդհանուր քանակը	121	214 **	**93**	**76.86%**

* Սույն կետում արտացոլված ընթացիկ նիստերով խորհրդի որոշումների և խորհրդի կողմից քննված օրակարգային հարցերի ընդհանուր քանակների տարբերությունը պայմանավորված է նրանով, որ համապատասխան հարցը խորհրդի օրակարգ ընդգրկվելուց հետո այն օրակարգից հանվել է: Նման դեպքում հարցը օրակարգից հանելու մասին (այդ թվում՝ հարցը օրակարգից հանելու պատճառների մասին) նշում է կատարվել նիստի արձանագրության մեջ, սակայն խորհրդի առանձին որոշում չի կայացվել.

* * *

Հավելված թիվ 5
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2015թ. հաշվետվության

ՀՊԳ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի վարած քրեական գործերի վերաբերյալ

համեմատության ժամանակահատված՝ 2014 և 2015 թվականներ

Վիճակագրական տվյալի չափանիշը		2014	2015	տարբեր. թվային արտահայտմամբ	տարբեր. տոկոսային արտահայտմամբ
1	**Հանրային պաշտպանների քանակ** (այդ թվում՝ 0,5 դրույք)	52	53	1	2%
	որից քրեական գործեր վարողների թիվը՝	*48*	*49*	1	2%
2	**Հաշվետու ժամանակաշրջանում վարած գործերի թիվը**	3717	4600	883	24%
3	**Հաշվետու ժամանակաշրջանում ավարտված գործերի թիվը***	2570	3007	437	17%
4	**Ավարտված քրեական գործերով պաշտպանյալների քանակը**	2754	3237	483	18%
	այդ թվում՝				
4.1	չափահաս անձինք	2576	3022	446	17%
4.2	անչափահաս անձինք	178	215	37	21%
Ա.	**Վարած գործերի թիվն՝ ըստ փուլերի**	3717	4600	883	24%
	այդ թվում՝				
1	**նախաքննությունների թիվը՝**	1484	1797	313	21%
2	**առաջին ատյանի դատարանում գործերի թիվը՝**	1737	2212	475	27%
3	**վերաքննիչ դատարանում գործերի թիվը՝**	445	481	36	8%

4	**վճռաբեկ դատարանում գործերի թիվը՝**	**6**	**6**	0	0%
5	**քրեական գործով ոչ կասկածյալին կամ մեղադրյալին տրամադրված անվճար իրավաբանական օգնության գործերի թիվը**	**45**	**104**	59	131%
Բ.	**Ավարտված գործերի թիվն՝ ըստ փուլերի**	**2570**	**3007**	437	17%
	այդ թվում՝				
1	**ավարտված նախաքննությունների թիվը՝**	**875**	**1050**	175	20%
2	**առաջին ատյանի դատարանում ավարտված գործերի թիվը՝**	**1261**	**1450**	189	15%
2.1	*որից արագացված կարգով քննված գործերի թիվը՝*	*616*	*776*	160	26%
3	**վերաքննիչ դատարանում ավարտված գործերի թիվը՝**	**383**	**397**	14	4%
4	**վճռաբեկ դատարանում ավարտված գործերի թիվը՝**	**6**	**6**	0	0%
5	**քրեական գործով ոչ կասկածյալին կամ մեղադրյալին տրամադրված անվճար իրավաբանական օգնության գործերի թիվը**	**45**	**104**	59	131%
Գ.	**Հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ գործերի թիվը**	**540**	**740**	200	37%
1	ընթացիկ նախաքննությունների թիվը՝	**231**	**279**	48	21%
2	առաջին ատյանի դատարանում ընթացիկ գործերի թիվը՝	**273**	**422**	149	55%
3	վերաքննիչ դատարանում ընթացիկ գործերի թիվը՝	**36**	**39**	3	8%
Դ.	**Վարած գործերով արձանագրված դրական արդյունքները**	**627**	**843**	216	34%
1	**Արդարացումների թիվը՝**	**39**	**52**	13	33%
	այդ թվում՝				
1.1	Լրիվ արդարացումների թիվը՝	25	36	11	44%
1.2	Մասնակի արդարացումների թիվը՝	14	16	2	14%

2	Կարճված գործերի թիվը	211	303	92	44%
	այդ թվում՝				
2.1	արդարացման հիմքով կարճումներ՝	75	119	44	59%
2.2	ոչ արդարացման հիմքով կարճումներ	136	184	48	35%
3	Մեղադրանքն ավելի մեղմ հոդվածով վերաորակված գործերի թիվը	57	57	0	0%
4	Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժի նշանակում. թիվը	7	9	2	29%
5	Պատիժը պայմանականորեն չկիրառված գործերի թիվը	313	422	109	35%
Ե.	Վերջնական դատական ակտերի բողոքարկումներով դր. արդյունք				
1	ընդհանուր բողոքարկումների թիվը՝ վերաքննիչ և վճռաբեկ	272	353	81	30%
2	բողոքարկման դրական արդյունքը	44	80	36	82%
3	Վերաքննության կարգով բողոքարկված գործերի թիվը	210	263	53	25%
	որից բավարարված բողոքների թիվը՝	42	75	33	79%
	այդ թվում՝				
3.1	լրիվ բավարարված բողոքների թիվը՝	22	52	30	136%
3.2	մասնակի բավարարված բողոքների թիվը՝	20	23	3	15%
4	Վճռաբեկության կարգով բողոքարկված գործերի թիվը	62	90	28	45%
	որից բավարարված բողոքների թիվը՝	2	5	3	150%
	այդ թվում՝				
4.1	լրիվ բավարարված բողոքների թիվը՝	1	4	3	300%
4.2	մասնակի բավարարված բողոքների թիվը՝	1	1	0	0%
Զ.	Խափանման միջոցների և դրանց բողոքարկման հետ կապված արդյունքներ				
1.	Կալանավորված պաշտպանյալների քանակը	335	509	174	52%

2.	**Կալանավորման որոշումների դեմ բողոքների թիվը**	**92**	**207**	115	125%
2.1	*որից բավարարված բողոքների թիվը՝*	**4**	**8**	4	100%
3.	**Կալանավորման՝ քննիչի միջնորդության մերժումների քանակը**	**26**	**37**	11	42%
4.	**Կալանավորման՝ որպես խափանման միջոցի փոփոխման թիվը**	**6**	**9**	3	50%
5.	**Գրավի կիրառմամբ գործերի թիվը**	**13**	**35**	22	169%

* * *

Հավելված թիվ 6
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2015թ. հաշվետվության

ՀՊԳ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի վարած քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերի վերաբերյալ

համեմատության ժամանակահատված՝ 2014 և 2015 թվականներ

Վիճակագրական տվյալի չափանիշը		*2014թ.*	*2015թ.*	*տարբեր. թվային արտահայտմամբ*	*տարբեր. տոկոսային արտահայտմամբ*
Ա.	Հաշվետու ժամանակաշրջանում վարած գործերի թիվը	1334	2588	1254	94.00%
1	Հաշվետու ժամանակաշրջանում դատական գործերի թիվը	198	350	152	76.77%
2	Հաշվետու ժամանակ. ավարտված դատ. գործերի թիվը*	91	163	72	79.12%
3	Հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ դատ. գործերի թիվը	58	152	94	162.07%
4	Հաշվետու ժամանակաշրջանում խորհրդատվությունների թիվը	1088	2142	1054	96.88%
5	Հանրային պաշտպանների քանակ (այդ թվում՝ 0,5 կամ 0,25 դրույք)	49	49	0	0.00%
	*չի ներառում հրաժարումների և առանց քննության թողած գործերի թիվը				

Բ.	Առաջին ատյանի դատարանում գործերի թիվը	քաղ.	վարչ.	քաղ.	վարչ.	քաղ.	վարչ.	քաղ.	վարչ.
		168	15	298	20	130	5	77.38%	33.33%
1	Առաջին ատյանում ավարտված գործերի թիվը	70	8	128	9	58	1	82.86%	12.50%
2	Առաջին ատյանի դատարանի ընթացիկ գործերի թիվը	53	4	137	10	84	6	158.49%	150.00%
3	Ընդհանուր կայացված վճիռների թիվ (վարչ. քաղ.)	78		137		59		75.64%	
4	Հօգուտ վստահորդի կայացված վճիռների թիվը	54		88		34		62.96%	
	այդ թվում՝								
4.1	ամբողջությամբ	48		63		15		31.25%	
4.2	մասնակի	6		25		19		316.67%	
Գ.	Վերաքննիչ դատարանում գործերի թիվը	քաղ.	վարչ.	քաղ.	վարչ.	քաղ.	վարչ.	քաղ.	վարչ.
		11	4	26	6	15	2	136.36%	50.00%
1	ՀՊԳ վերաքննիչ բողոքների թիվը	29		67		38		131.03%	
2	Վերաքննիչ դատարանում ավարտված գործերի թիվը	10	3	21	5	11	2	110.00%	66.67%
3	Վերաքննիչ դատարանի ընթացիկ գործերի թիվը	1	1	4	1	3	0	300.00%	0.00%
4	ՀՊԳ բողոքները մերժելու թիվը	8		20		12		150.00%	
5	ՀՊԳ բողոքները բավարարելու թիվը՝	7		12		5		71.43%	
	այդ թվում՝								
5.1	լրիվ	7		9		2		28.57%	
5.2	մասնակի			3		3		0.00%	

Դ.	Վճռաբեկ դատարանում գործերի թիվը	քաղ.	վարչ.	քաղ.	վարչ.	քաղ.	վարչ.	քաղ.	վարչ.
1	ՀՊԳ վճռաբեկ բողոքների թիվը (ըստ էության դատական ակտի)	14		24		10		71.43%	
2	Վճռաբեկ դատարանում վարույթ ընդունված բողոքների թիվը			1		1			
Ե.	Սահմանադրական դատարանում գործերի թիվը								
1	ՍԴ դիմումների թիվը			1		1			
Զ.	Խորհրդատվություն	1088		2142		1054		96.88%	
2	Բանավոր խորհրդատվությունների թիվը	770		1552		782		101.56%	
3	Գրավոր խորհրդատվությունների թիվը	318		590		272		85.53%	
	այդ թվում՝								
3.1	դատավարական փաստաթղթեր (հայցադիմում, բողոք և այլն)	185		316		131		70.81%	

* * *

Հավելված թիվ 7
ռազմավարական ծրագրի կատարման
վերաբերյալ 2015թ. հաշվետվության

ՀՊԳ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի վարած և հաշվետու ժամանակահատվածում ավարտված քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերի վերաբերյալ

Հանրային պաշտպանի գրասենյակ դիմած քաղաքացիներն՝ ըստ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կատեգորիաների

համեմատության ժամանակահատված՝ 2014 և 2015 թվականներ						
№	*Կատեգորիայի անվանումը*	*«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածը, մասը և կետը*	*Դիմած քաղաքացիների թիվը**		*տարբեր. թվային արտահայտմամբ*	*տարբեր. տոկոսային արտահայտմամբ*
			2014	*2015*		
1	Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներ	**41-5-1**	**24**	**75**	**51**	**213%**
2	1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներ	**41-5-2**	**399**	**552**	**153**	**38%**
3	դատապարտյալներ	**41-5-3**	**49**	**106**	**57**	**116%**

4	ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներ	41-5-4	268	438	170	63%
5	Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներ	41-5-5	41	50	9	22%
6	գործազուրկներ	41-5-6	134	498	364	272%
7	միայնակ բնակվող կենսաթոշակառուներ	41-5-7	188	263	75	40%
8	առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք	41-5-8	5	6	1	20%
9	փախստականներ	41-5-9	19	30	11	58%
10	Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներ	41-5-10	0	3	3	100%
11	անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում	41-5-11	46	271	225	489%

12	հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք	41-5-12	6	12	6	100%
13	օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք	41-5-13	0	0	0	0%
Ընդամենը՝			**1179**	**2304**	**1125**	**95%**

* * *